Հայտնի է, որ տաքացնելով հնարավոր է պինդ մարմինները վերածել հեղուկի, իսկ հեղուկները գազի: Տեխնիկայում ընդունված է գազային այն մարմինները, որոնք մթնոլորտային ճնշման պայմաններում հեշտությամբ վերածվում են հեղուկի անվանել գոլորշի, իսկ դժվարությամբ հեղուկացողները գազեր [93,106]: Տեխնոլոգիական նպատակներից կախված, հումքի և սննդամթերքների ջերմային մշակման եղանակները (տաքացում և հովացում, գոլորշիների կոնդենսացում, խտացում և այլն) խիստ տարբեր են:

Ըստ էության թորումը սննդարդյունաբերությունում առավել տարածված ջերմափոխանակային պրոցեսներից է, գոլորշիների

կոնդիսացիայի շնորհիվ երկ կամ բազմաբաղադրիչ  
լուծույթների տարանջատման համար ազդեցատային  
վիճակի փոփոխումը:

Թորումը դա երկ կամ բազմաբաղադրիչ ցնդող  
նյութերի խառնուրդների բաժանումն է: Թորման  
պրոցեսի իրականացումը պայմանավորված է,  
բաժանման ենթակա բաղադրիչների  
ցնդունակությամբ: Խառնուրդի եռման ընթացքում  
առավել հեշտցնդող բաղադրիչը անցնում է գազային  
ֆազա համեմատաբար մեծ քանակներով, փաստորեն  
անջատված գազային ֆազան հարստանում է առավել  
հեշտ ցնդող բաղադրիչով: Քանի որ հեշտ ցնդող  
բաղադրիչը տիրապետում է գոլորշու (գազի) առավել  
մեծ առաձգականության, այն ունենում է հագեցման  
ավելի ցածր ջերմաստիճան: Նշված երևույթը  
օգտագործելով հնարավոր է դառնում բարդ  
լուծույթները առավել կամ պակաս չափի  
խառնուրդներով բաժանել բաղադրիչների [1,6,19]:

Թորման պրոցեսները մեծ կիրառություն ունեն  
սննդարդյունաբերությանում, հատկապես, սպիրտի,  
օդու, գինեգործության և եթերայուղերի  
արտադրությաններում:

Էթիլ սպիրտը  $C_2H_5OH$  իրենից ներկայացնում է,  
այրող համով և բնորոշ հոտով անգույն թափանցիկ  
հեղուկ 20 °C-ում 789,27 կգ/մ<sup>3</sup> խտությամբ, նորմալ  
մթնոլորտային պայմաններում հագեցման  
ջերմաստիճանն է 78,35 °C: Էթիլ սպիրտը հիգրոսկոպիկ է,  
լավ լուծիչ, ջրի հետ խառնվում է ցանկացած  
հարաբերությամբ: Էթիլ սպիրտը և դրա ջրային խիտ  
լուծույթները այրվում են գոլանատ կապտավուն  
բոցով, գոլորշիների և օդի խառնուրդը 2,8-13,7 %-ի  
սահմաններում պայթուցանավտանգ են [19,31,48,61,122]:

Խմորված մրգային զանգվածից սպիրտի (62-68 %) ստացման համար իրականացվում է թորում: Եթիլ սպիրտից և ջրից զատ, թորվածք է անցնում խմորված զանգվածում պարունակվող այլ ցնդող միացություններ: Մասնավորապես թորվածք է անցնում մեթիլային, պրոպիլային, բուտիլային, ամիլային, հեքսիլային սպիրտների միացություններ, ցնդող թթուներին՝ քացախաթթու, մրջնաթթու, պրոպիոնաթթու, ճարպաթթու և այլն: Սպիրտներից և թթուներից զատ թորվացք են անցնում քացախային, պրոպիլային, ճարպային ալդեհիդներ, բարդ եթերներ և միջարքացետալներ [9,36,40]:

**1.3.4. Խմորված զանգվածի թորման արգասիքներ**

Խմորված զանգվածի թորվածքում պարունակվում են էթիլ և մեթիլ սպիրտներ, ալդեհիդներ, պրոպանոլ, բութանոլ, \$ենիլ էթանոլ, \$ոլր\$ոլրոլ և այլն :[9,40,48]

Եթիլ սպիրտը (C2H5OH) (էթանոլ, հիդրօքսիէթան, ալկոհոլ, գինու սպիրտ) մարդու և կենդանիների օրգանիզմի վրա յուրահակուկ \$իզոլոգիական ազդեցություն գործող սպիրտների դասի առավել հայտնիներ կայացուցիչն է:

Սպիրտային խմորման շնորհիվ էթիլ սպիրտի առաջացումը տարածված է թեբնություն մեջ, այնպես էլ հնուց մարդու կողմից հիմնված կենցաղում և արդյունաբերությունում:

Չնչին քանակներով էթիլ սպիրտ պարունակվում է բնական ջրում, մթնոլորտում, հողի մեջ: Եթիլ սպիրտ է հայտնաբերվել բույսերի տերևներում, կաթի մեջ, կենդանիների հյուսվածքներում: \$իզոլոգիապես առողջ մարդու արյան մեջ պարունակվում է մինչև 0,03-0,04% էթիլ սպիրտ [131]:

Էթիլ սպիրտը բնորոշ հոտով, այրող համով, անգույն, հիգրոսկոպիկ հեղուկ է: Մթնոլորտային ճնշման պայմաններում էթիլ սպիրտը եռում է 78,39 0C-ում, բյուրեղանում է -114,15 0C-ում, 20 0C-ում խտությունն է 0,789 կգ/դմ<sup>3</sup>, գույնը անառն է, ջրում լուծվում է 200C-ում - 910 կՋ/կգ, այն հեշտորեն բռնկվող է, վառվում է բաց երկնագույն թուլլուսավորող բոցով [83,85,96]:

Էթիլ սպիրտի ստացման տրադիցիոն եղանակը համարվում է ածխաջրային հումքի խմորումը: Տեխնիկական նպատակներով էթիլ սպիրտ ստացվում է թաղանթանյութի հիդրոլիզով, այնուհետև խմորմամբ էթիլենից ( $\text{CH}_2=\text{CH}_2+\text{H}_2\text{O}\rightarrow\text{C}_2\text{H}_5\text{OH}$ ): Ալկոհոլային ըմպելիքների և սննդարդյունաբերության մեջ օգտագործվում է միայն սննդային հումքի խմորումից ստացվող սպիրտ [84]:

Մեթիլ սպիրտը (մեթանոլ, մեթիլային ալկոհոլ, կարբինոլ, օքսիմեթան, փայտի սպիրտ) սահմանային միատոմ սպիրտների հեմոլոգի շարքի առաջին անդամն է ( $\text{CH}_3\text{OH}$ ): Մեթիլ սպիրտը ուժեղ թուլն է, ազդում է նյարդերի և սրտանոթային համակարգի վրա: Մեթիլ սպիրտը էթիլ սպիրտին բնորոշ հոտով անգույն հեղուկ է,

ուսի տիպի այրող համ, 15 0C-ում խտությունը 0,796 կգ/դմ<sup>3</sup>, մթնոլորտային ճնշման պայմաններում եռում է 64,65 0C-ում ցանկացած հարաբերությամբ խառնվում է ջրի և օրգանական շատլուծիչների հետ, հեշտությամբ բռնկվում է, այրվում թուլլուկապոլտ բոցով, օդի հետ առաջացնում է պայթուցիկ խառնուրդ [41,131]:

Խմորման ընթացքում մեթիլ սպիրտի առաջացման հիմնական պատճառը խմորվող զանգվածում պարունակվող պեկտինների հիդրոլիզն է: Յատկապես

մեծ քանակությամբ պեկտիններ են պարունակվում կորիզավոր մրգերի պտուղներում: Այդ պատճառով բավականին մեծ քանակությամբ մեթոնալ է պարունակվում նրանցից խմորման եղանակով պատրաստված ալկոհոլային ըմպելիքներում [115,116,118,132,136]:

Մինչև անցյալ դարի 20-ական թվականները արդյունաբերական նպատակներով մեթիլ սպիրտը ստանում էին փայտի չոր թուրմով, ներկայումս հիմնականում ստացվում է ջրածնի հետ ածխածնի օքսիդի կատալիտիկ վերականգմամբ ( $\text{CO} + 2\text{H}_2 \rightarrow \text{CH}_3\text{OH}$ ):

Մեթիլ սպիրտով թունավորվելիս գլխուղեղում, տեսողական օրգաններում խանգարվում է օքսիդավերականգման պրոցեսները: Սուր թունավորումը բնութագրվում է հարբեցության վիճակով, նոխկանքով, փսխումով, ուժեղ գլխացավով, տեսողության կտրուկ թուլացմամբ, ընդհուպ մինչև կոկորացում և մահ [127,131]:


### **1.3.5. Յուրահամարանյութային, խմորման, թորման և արքեր և ապարատներ**

Ալկոհոլային ըմպելիքների արտադրությունը ներառում է.

- Առաջնային գինեգործություն՝ հումքի վերամշակում, խմորում, գինեկերթի արտադրություն,
- Երկրորդային գինեգործության՝ գինիների տեխնոլոգիական մշակում և պատրաստի արտադրանքի թողարկում,
- Փրփրուն գինիների արտադրություն,
- Բրենդիների սպիրտերի արտադրություն և բրենդիների արտադրություն [85,119]:

Կորիզավոր մրգերից բաղկացած հոլմքի մշակման, խմորման, թորման սարքերի ու ապարատների ընտրությունը կախված է կիրառվող տեխնոլոգիական ուղղագծից:

Կորիզավոր մրգերից թունդ ալկոհոլային ըմպելիքների արտադրման պարզագույն տեխնոլոգիական ուղղագիծը բերված է №1 սխեմա



Սխեմա 1. Կորիզավոր մրգերից թունդ ալկոհոլային ըմպելիքների արտադրման տեխնոլոգիական ուղղագիծ

Ինչպես երևում է սխեմայից՝ թեօղու թերեւորիի ստացման տարբերակներն են.

1. 1, 2, 3, 4, 5, 6, 7 - հնեցված բրենդի՝ ջերմային մշակում անցած քաղցուի խմորմամբ,
2. 1, 3, 4, 5, 6, 7 - հնեցված բրենդի՝ առանց քաղցուի ջերմամշակման,

3. 1, 2, 3, 4, 6, 7 - մրգային օղի՝ ջերմային մշակում անցած քաղցուի խմորմամբ,
4. 1, 3, 4, 6, 7 - մրգային օղի՝ առանց քաղցուի ջերմամշակման:

Այս տեխնոլոգիաների տարբերությունը կայանում է ջերմափոխանակիչի կիրառման տարբերությամբ: 1 և 3 սխեմաներում կիրառվում են ջերմափոխանակիչներ՝ բլանշիրովկա կատարելու համար:

Չաշվի առնելով, որ ալկոհոլային խմիչքների արտադրության համար օգտագործվում են հասուն և գերհասուն մրգեր, նրանց լվանալը կորցնում է իմաստը՝ լվացման սարքերում միրգը կարող է վնասվել և կորցնել հյութի մասը:

Արտադրություն և ընդունված հումքը ենթարկվում է ջնկման, տեսակավորման և մատուցվում կորիզանջատիչ մեքենա: Ստացված պտղային զանգվածը ավելի մանրացնելու պահանջի դեպքում այն տրորվում է երկաստիճան տրորող մեքենայով: Պտղային խյուսը ակտիվ կոնվեկցիայի ընթացքի ապահովելու համար խմորման է ենթարկվում ջերմափոխանակման շապիկով տարողություններում, որոնք օժտված են նաև խառնիչներով:

Կորիզավոր մրգերի առաջնային թորման համար կարող են օգտագործվել անընդհատ գործողության թորման աշտարակներ, իսկ բրենդիի սպիրտի թորման համար ընդհատ գործողության թորման ապարատներ՝ հիմնականում շարանտական УПКС և Չորաբյան՝ КУ 300: Անընդհատ գործողության թորման ապարատները օգտագործվում են սպիրտահումք ստանալու համար և վերաթորվում է ընդհատ գործողության թորման ապարատներով [44]:



Սարքավորումները մասերը, դետալներն ու հանգույցները, որոնք անմիջականորեն շփվում են հոլմքին, սպիրտին, սպիրտահոլմքին կամ գիներենյութին պետք է արտադրված լինեն հետևյալ նյութերից [1,44].

- Բրոնզ՝ հետևյալ մակնիշների . БрА9-Ж3А; БрОФ-3-05; БрОФ9-0,3; БрА-9; БрАЖ-7-4; БрАМц12-2; БрАЖМц11-4-2; БрАЖН10-4-4; БрАК7-1; БрАК7,5-1,8; БрОФ4-0,25; Бр05Ц5С5
- Արույր՝ հետևյալ մակնիշների . АК80-3; А80; АС59-1; А63; АМцНЖА60-1-2-1-1
- М-1 մակնիշի պղինձ
- Չժանգոտվող պողպատ հետևյալ մակնիշների . 12Х18Н9Т; 12Х18Н10Т; 08Х21Н6М2Т; 12Х21Н5Т; 10Х14Г14Н4Т; 08Х17Т; 08Х22Н6Т; 10Х14Г14Н3; 08Х18Г8Н2Т; 12Х13; 20Х13; 30Х13; 12Х17; 14Х17Н2; 10Х17Н13М2Т; 10Х17Н13М3Т; Х18Г8Н2М2Т; Х18АГ15; 10Х14АГ15; 0Х18Т1; Х14АГ14; ВСН-2; 2Х18Н4Г4; 0Х20Н5Г12БА; 1Х17АГ12; 08Х18Г8Н2МТ; 0Х23Н28М2Т; 40Х25Н; 08Х18Ф2Т1; 08Х18Т1; 08Х17Н5М3; Х16Н16; 06Х18Т4; 01Х18Т-ВН; և այլ
- Անագ՝ հետևյալ մակնիշների . 01, 02.
- Տիտան՝ հետևյալ մակնիշների . 0Т4, БТ4, 3В, ВТ1-0, ВТ1-00, ВТ5, ВТ6-С, ВТ1-1М, ПТ-7М, ВТ-2
- Բետոն՝ հետևյալ մակնիշների . М-150, М-200, М-25, М-300, М-400, М-500, М-600
- Փայտ (Յիմնականում կաղնե փայտ, կարող են օգտագործվել այլ տեսակի՝ բացառությամբ փշատերև առատեսակների փայտից)
- Ապակի
- Պլաստիկ զանգվածներ՝ վինիլապատ, օրգանական ապակի, պոլիամիդ խեժ 610, պոլիվինիլքլորիդ . ПВХ-7, պոլիկարբոնատ, պոլիպրոպիլենի որոշ մակնիշներ, պոլիստիրոլ . УПС, СНП1-2П, Ֆտորոպլաստ-4
- Սննդային ռետին՝ հետևյալ մակնիշների . 52-498, 42-446, 52-436 [44,92]:

#### 1.4. Ալկոհոլային ըմպելիքների բոլորային կիսապատրաստուկներ

Ալկոհոլային ըմպելիքների նոտրեկան համաև հոտ հաղորդելու, առավելագույնս արտահայտիչ դարձնելու համար, օգտագործվում են թուրմեր, սպիրտացված հյութեր, օշարակներ, էսենցիաներ, բուրավետ սպիրտներ [21,62,77]:

Բուսական հումքից բուրավետ նյութերի կորզումը կատարվում է տարբեր լուծիչներով դիֆուզիոն ճանապարհով: Ըստ Ֆիկի օրենքի, լուծիչի մեջ դիֆուզվող նյութերի Գքանակը ուղիղ համեմատական է հումք-լուծիչ սահմանի խտությունների N-ո տարբերությանը, թրմման տևողությանը, հումքի շերտի F մակերեսին, հակադարձ համեմատական հումքի շերտի X հաստությանը, փաստորեն դիֆուզիոն ճանապարհի երկարությանը.

$$G = \frac{DF(N-n)t}{X}$$

Դիֆուզիայի D գործակիցը թվական արժեքով հավասար է միավոր ժամանակում (1 վրկ) անցած նյութի քանակին (մոլ), փաստորեն 1 սմ ճանապարհում խտության փոփոխությանը 1 մոլ / սմ<sup>3</sup> [1,2]:

Թուրմեր ստացվում են հիմնականում չոր բուսական հումքը ջրասպիրտային լուծույթներով թրմելով, սպիրտացված օշարակները թարմ և չոր մրգահատապտղային հումքի թրմումով: Սպիրտացված հյութեր արտադրվում են թարմ մրգերից և հատապտուղներից, սննդային էսենցիաներ հիմնականում եթերայուղերից [19,87,88,106,107]:

Բուրավետ սպիրտները, եթերայուղատու և մրգահատապտղային հումքատեսակների կամ դրանց

կիսապատրաստու կների, ջրասպիրտային  
լուծույթով թորված նյութեր են, կիրառելի են թե  
թարմ և թե չոր հումքատեսակները: Բուրավետ  
սպիրտները տիրապետում են ուժեղ բնորոշ բույրի,  
ստացվում են թե առանձին և թե տարբեր  
հումքատեսակների խառնուրդներից: Առավել  
հայտնի են աշորայի չորահացից, կիտրոնի կեղևից,  
գիհուլ, արոսի, դառը նշի, ազնվամորու, բալի, սուրճի,  
անիսոնի պտուղներից, հաղարջի, կաղնու  
ճյուղերից, դառը օշիկներից, վարդից, մեխակից,  
մուսկատի ընկույզից ստացվող բուրավետ  
սպիրտները [1,2,29,39,93,114]:

Բուրավետ սպիրտների ստացման համար  
կիրառվող տարբերակներ են հումքի կամ հումքային  
խառնուրդի կանխավ թրմումը, կամ առանց թրմման  
ջրասպիրտային լուծույթում խառնված վիճակով  
թորումը: Յեշտ ցնդող միացությունների մեծ  
պարունակությամբ հումքատեսակներից բույրի  
կորզումը իրականացվում է ջրասպիրտային  
գոլորշիներով [1,29,39,71]:

## **1.5. Սպիրտահումքի հնեցում**

Մրգային սպիրտներից հիմնականում  
արտադրվում են օղիներ և հնեցված խմիչքներ՝  
բրենդիներ: Յնեցումը հիմնականում կատարվում է  
տակառների մեջ կամ կաղնե տախտակներով կամ  
չիպսերով լցված էմալ ապատպահամաններում [134]:

### **1.5.1. Կաղնի փայտի քիմիական կազմ**

Ալկոհոլային խմիչքների արտադրության  
տեխնոլոգիայում իր ուրույն տեղն է զբաղեցնում  
տակառների մեջ հնեցումը: Տակառների մեջ

գիւնի ներքը և սպիրտն երը ձեռք են բերում հաճելի բուրմունք, օրգանոլեպտիկ հատկությունները հարստանում, նրբանում են և «ազնվականում»: Շատ ալկոհոլային ըմպելիքների ստեղծման հիմքում ընկած է դրանց հնեցումը տակառներում: Առաջներում տակառն օգտագործվում էր որպես պահաման, ինչի շնորհիվ պատահաբար բացահայտվել են այնպիսի խմիչքների ստացման տեխնոլոգիաներ, ինչպիսիք են վիսկին, կոնյակը, կալվադոսը և այլն: Տակառների նման ազդեցությունը, անշուշտ կախած է տակառների փայտի քիմիական բաղադրությունից և ֆիզիկական հատկություններից: Իսկզբանե ալկոհոլային խմիչքի պահպանման և տեղափոխման համար օգտագործվում էր տարբեր ծառատեսակների՝ կաղնու, հաճարի, շագանակենու և այլ ծառատեսակների բնափայտից պատրաստված տակառներ: Յետագա աշխատանքների արդյունքներով եզրակացվեց, որ ալկոհոլային խմիչքների արտադրության մեջ լավագույն հումքը հանդիսանում է կաղնու փայտը [51,110,120,134]:

Կաղնին (*Quercus*) Յաճարագգիների ընտանիքի տերևաթափ կամ մշտադալար ծառերի ցեղ է, այն 30-40մ բարձրության հասնող միատուն ծառ է: Յայաստանում աճում է կաղնու հինգ տեսակ, որոնցից անտառ են կազմում երեքը՝ Կաղնի խոշորաբեր (*Quercus Macranthera*), Կաղնի վրացական (*Quercus Iberica*), Կաղնի Արաքսյան (*Quercus Araxina*): Կաղնի ծառը աճման և բնակլիմայական պայմաններից ելնելով ձևավորում է տարբեր քիմիական կազմի բաղադրիչներով բնափայտ: Յիմնականում կաղնի բնափայտը պարունակում է .

• **Ցելյուլոզ (թաղանթանյութ)**

Կաղնուկ փայտի մեջ ցելյուլոզան ներկայացված է β-D-գլյուկոզի դային մասնիկների պոլիմերային երկար շղթայով: Այդ մոնոմերները կապված են գլյուկոզի դային, բարդ եթերային կամ ջրածնային կապերով: Պոլիմերի մոլեկուլը արգանգվածը կարող է տատանվել 75.000-6.000.000 սահմաններում: Կաղնուկ փայտի բաղադրիչներից ամենախնդրող ցելյուլոզան է, որը մինչև գլյուկոզային ճեղքելու համար պետք է մշակել բարձր ջերմաստիճաններում կամ ուժեղ անօրգանական թթուներով: Առավել հաճախ տակառների արտադրության տեխնոլոգիայում կիրառվում է տակառատախտակների կրակով մշակումը: Ընդունված է, որ գինեգործ-տեխնոլոգները տակառագործներին ներկայացնեն պահանջվող տակառների այրման տևողությունը և աստիճանը, որով և պայմանավորվում է հետևյալ խմիչքի ստացվող կազմը և օրգանոլեպտիկ հատկությունները [85,83]:

**• Յեմիցելյուլոզա**

Յեմիցելյուլոզան կաղնի փայտում բաղկացած է հիմնականում 1500 և 2300 մոլեկուլը արգանգված ունեցող ածխաջրերից: Մեծ մասամբ ածխաջրերը ներկայացված են պենտոզներով, պարունակում է նաև հեքսոզներ: Բնափայտում պարունակվող հեմիցելյուլոզայի մեջ պարունակվող պենտոզներից բացահայտվել են քսիլոզան և արաբինոզան, իսկ հեքսոզներից՝ գլյուկոզան, մաննոզան, գալակտոզան և այլն: Ի տարբերություն ցելյուլոզայի, հեմիցելյուլոզայի կարևոր հատկանիշներից է տարբեր թթուներին և հիմքերին ազդեցությունը տրոհումով հեշտորեն հիդրոլիզվելը: Այդ առումով հեմիցելյուլոզան բաժանում են երկու \$րակցիայի՝ հեշտ

լուծվողներին, որոնք ի վիճակի են տրոհվել ու  
օրգանական թթուների թույլ (մինչև 2,5 %)  
լուծույթում և դժվար լուծվողներին, որոնք  
հիդրոլիզվում են միայն օրգանական թթուների  
խտացված լուծույթների ազդեցությամբ: Ընդ որում  
երկու \$րակցիաներն էլ հավասարապես  
ներկայացված են կաղնու փայտում [130,134]:

• **Լիգնին**

Լիգնինները կաղնի փայտում ներկայացված են  
իրար և/կամ ածխաջրերի հետ կապված բուրավետ  
միացություններով: Այսպիսով կաղնու բնափայտի  
լիգնինները իրենցից ներկայացնում են 7.000-10.000  
մոլեկուլային զանգվածով ճյուղավորված բարդ  
պոլիմերներ: Պոլիմերի շղթայի հիմնական  
օղակներն են չորս \$ենոլային ալդեհիդներ.  
վանիլինը, սիրինգալդեհիդը, կոնի \$երալդեհիդը և  
սինապալդեհիդը: Յենց այս չորս \$ենոլային  
ալդեհիդների ներկայությամբ և խտությամբ է  
պայմանավորվում տակառների պատրաստման համար  
փայտի արժեքավոր լինելը: Յայսատանում աճող  
անտառ կազմող կաղնու երկու տեսակների՝ *Q. Macranthera* և  
*Q. Iberica* փայտի մեջ բուրավետը նշված  
միացությունների քանակներն ավելի բարձր են,  
քան \$րանսիական ամենահայտնի և ամենահարուստ  
*Chêne sessile (Quercus petraea)*, որին \$րանսիացի գիտնականներն  
անվանում են «grain fin»: Անալիզները, որոնք կատարվել  
են աշխարհահռչակ “Կուրվուազյե” կոնյակի  
գործարանում ժ. Լավերնի կողմից ապացուցեցին  
այդ փաստը [130,134]:

• **Դաբաղանյութեր**

Դաբաղանյութերը, տանինները, տանիդները  
օրգանական բարդ միացություններ են, որոնք

կոնցենտրացված են հատկապես բնափայտի և միջուկի ճառագայթների պարենխիմայի բջիջներում: Տանիների որոշակի քանակ պարունակվում է նաև միջբջջային տարածքներում: Յենցայդ տանիներն են, որ հեշտորեն են լվացվում և լուծվում փայտը շրջապատող հեղուկի մեջ: Տարիքի ընթացքում կաղնի բնափայտի մեջ ավելանում են հեշտլուծող տանիները, նվազում դժվար լուծվողները: Տանիների առավելագույն քանակ կարողանում են «որսալ» 45-55%-ոց ջրասպիրտային լուծույթները: Դաբաղանյութերի քանակը կաղնի բնափայտի մեջ բացարձակ չոր նյութերի հաշվով կարող է տատանվել 2-10%-ի: Չնայած որ կաղնու փայտով զբաղվել են բազմաթիվ գիտնականներ և գիտահետազոտական հաստատություններ, այնուամենայնիվ նրանում պարունակվող տանիները դեռևս բավականաչափ ուսումնասիրված չեն: Յամաձայն Ի.Մ.Սկուրիխի [89] կաղնի փայտի 0,5% մետոքսիլխումբ պարունակող տանիների բաղադրությունը հետևյալն է. ածխածին -41,43%, ջրածին -4,08%, թթվածին -54,49%: Յամաձայն Ն.Վիվասի [89] դժվար լուծվող տանիները կազմված են հիմնականում կոնդենսացվող պրոանտոցիանիդներից, իսկ հեշտլուծվողները ներկայացված են էլագոտանիներով և գալլատանիներով: Վերջինները թթվային միջավայրում հիդրոլիզվելուց առաջացնում են համապատասխանաբար՝ էլագոթթուներ և գալլաթթուներ: Տանիները կարող են կապվել ծանր մետաղների հետ՝ առաջացնելով տանատներ: Յենցված կոնյակի սպիրտների սևացումը պայմանավորված է երկաթի տանտի պարունակությամբ [130,134]:

• **Ցնդող բույրային միացություններ**

Յնդոդ բույրային նյութերը՝ կախված կաղնու տեսակից, աճման աշխարհագրական դիրքից և բնակլիմայական պայմաններից ներկայացված են տարբեր միացություններով և խտություններով: Այդ միացություններով է պայմանավորված կաղնու թարմ փայտի հոտը: Ամենամեծ կոնցենտրացիայով այդ միացություններից են ըստ պարունակության հետևյալները [120,134].

- ցիս- և տրանս-β-մեթիլ-γ-օկտալակտոնը, որոնք ունեն կոկոսի բուրմուռնքին մոտարոմատներ: Ի դեպ, ցիս-տարբերակն ունի ավելի ուժեղ հոտ
- Էվգենոլ, որը հիշեցնում է մեխակի բուրմուռնք
- Իզոէվգենոլ, որն ունի մեխակին մոտ՝ կծու և թանձր հոտ
- Վանիլին, որն ունի վանիլային բուրմուռնք
- Օքսո-3-ռետրո-α-իոնոլ՝ ունի նեկտարինի և ծաղկային բուրմուռնք հիշեցնող հոտ

**• Երկրորդական նյութեր**

Ըստ Ն. Վիվասի [134] գինեգործությունում երկրորդական նյութեր են համարվում կաղնի փայտում չնչին քանակությամբ պարունակվող լիգնաններից՝ լիոնիռեզինոլը և \$լավոնոյիդներից՝ քերցետինը, որոնք, ունենալով համապատասխանաբար կարմիր և դեղին գույն, այնուամենայնիվ չեն ազդում ոչ կաղնու փայտի գույնի վրա, ոչ էլ հնեցվող նյութերի որակական հատկանիշների վրա: Այս նյութերի շարքում են դասվում նաև կարոտինոիդները, որոնք թարմ փայտը գունավորում են դեղնա-վարդագույն երանգով, սակայն քայքայվում են՝ փայտը կտրելուց հետո մի քանի շաբաթվա ընթացքում: Փայտում պարունակվում են նաև տերպեններ, որոնցից բացահայտվել են պենտացիկլիկ տրիտերպեններ՝ լյուպեոլը և



ամիրիները: Պարունակվում են նաև ստերոիդներ՝ մասնավորապես սիտոստերոլը: Պարունակվում են նաև ճարպերի աննշան քանակներ, որոնք ներկայացված են չհագեցված ճարպաթթուներով և տրիգլիցերիդներով: Պարունակվում են նաև հետևյալ մետաղների չնչին քանակներ . Ca, K, Mg, Fe, Cu, Al, Zn, Pb, Ba, Co, Mo: Փայտի մեջ կարելի է հայտնաբերել նաև սպիրտակոլցների աննշան քանակ [89,120,130,134]:

### **1.5.2. Կաղնու փայտի ազդեցությունը հնեցման պրոցեսի վրա**

Տեղնուկոգիայով հնեցումը պահանջող ալկոհոլային խմիչքների մեծ մասի հնեցումը կատարվում է կաղնե փայտից պատրաստված տակառների մեջ: Խմիչքները հնեցման ընթացքում գունավորվում են, վերափոխվում և հարստանում բույրային և այլ նյութերով: Փորձենք պարզել տակառի և կաղնի փայտի ազդեցությունը հնեցման պրոցեսի վրա կոնյակի և մրգային սպիրտների օրինակի վրա.

Թարմ սպիրտը (կոնյակի և մրգային) լինում է անգույն, թերի փնջով, այրող համով: Սպիրտները պարունակում են նաև տհաճ համեր, որոնք բնորոշ են նորթորվածքների: Յնեցված սպիրտները ունենում են գունավերում՝ բաց ոսկեգույնից մինչև շագանակագույն, ձեռք են բերում հարուստ փունջ և փափուկ ու հաճելի համ: Ըստ էության, տակառների մեջ հնեցումն իրենից ներկայացնում է խմիչքի օքսիդացում: Այս օքսիդացումը բավականին հետքեր է և յուրօրինակ՝ խմիչքը ստանում է թթվածնի չնչին քանակներ տակառի փայտի և անցքի միջոցով, ռեակցիայի մեջ մտնում այդ թթվածնի հետ՝ հիմնականում տակառի փայտի մեջ: Տակառները

կաղնու փայտի միջոցով «շնչում են»՝ հարստացնելով թթվածնով հնեցվող խմիչքը և արտազատելով պահպանվող խմիչքի մի մասը՝ հնեցման ընթացքում բնական կորուստներ (հրեշտակների բաժին): Այսպիսով տեղի են ունենում օքսիդացման ռեակցիաներ, որոնցում տակառի փայտը հանդիսանում է նորպես «կատալիզատոր» և նորպես օքսիդացման ռեակցիային մասնակցող լրացուցիչ բաղադրիչների «մատակարար» [134]: Յնեցման նմանատիպ ռեակցիայի պատճառն է կաղնի փայտի ոչ միայն քիմիական բաղադրությունը, այլ նաև \$իզիկական հատկություններն ու մեխանիկական կառուցվածքը:

Կաղնու փայտի ազդեցությունը հնեցման ընթացքի վրա ուսումնասիրություններին հատկապես հետաքրքիր է Ա.Դ. Լաշխիի [60] կողմից կատարված աշխատանքը: Մասնավորապես նա հիևգտարի անընդմեջ ուսումնասիրել է հնեցվող նույն կոնյակի սպիրտների մեջ ցնդող թթուների, ալդեհիդների, ացետալների, եթերների, բարձր սպիրտների պարունակության տատանումները: Փորձերը դրվել էին կաղնի տակառներում հնեցվող 2, 6, 7, 9, 15 և 22 տարեկան կոնյակի սպիրտների վրա: Ըստ ստացված արդյունքների ցնդող թթուները հիևգտարվա հնեցման ընթացքում ավելանում են չնչին քանակությամբ, բարձր սպիրտների քանակը գրեթե չի փոխվում ամբողջ հնեցման ընթացքում, \$ուր\$ուրուի ավելացում դիտվում է միայն երիտասարդ սպիրտների մոտ, իսկ վեց տարեկանից բարձրերի մոտ՝ մնում անփոփոխ: Ալդեհիդների, ացետալների, և եթերների քանակը դանդաղ ավելանում է, սակայն որոշ դեպքերում կարող է անսպասելի նավազել: Տևական հնեցման ընթացքում ուսումնասիրությունն կատարելը բավականին բարդ

Է. հնարավոր չէ նույն տակառից տասնամյակներ շարունակ վերցնել նմուշներ և ուսումնասիրել: Շատ հետաքրքիր է Լիբմանի և Շերլի [129] կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Ութ տարի անընդմեջ 469 տակառներում հնեցվող վիսկիի սպիրտի ուսումնասիրման արդյունքում ստացան հիպերբոլային հավասարում.

$$Y = \frac{t}{a + bt}$$

որտեղ Y- ուսումնասիրվող նյութի քանակն է, t- պահպանման (հնեցման) ժամանակն է՝ տարիներով, a և b- հաստատուն մեծություններ են, որոնք տիրվող թթուների համար կազմում են a=0,109, b=0,013, եթերների համար՝ a=1,353, b=0,0053, ալդեհիդների համար՝ a=2,104 b=0,61, \$ ուր \$ ուրոլի համար՝ a=1,250, b=0,57, տանիդների համար՝ a=0,125, b=0,0178, գույնային քանակի համար՝ a=18,717, b=2,483, pH համար՝ a=4,907, b=1,352, էքստրակտների համար՝ a=0,061, b=0,0047:

Հնեցման ընթացքում եթերների ընդհանուր քանակը, որոնք պատկանում են բուրավետ նյութերին և ազդում են կոնյակի ներդաշնակության վրա գրեթե չեն փոխվում, սակայն փոխվում է եթերների կազմը: Օքսիդացման պատճառով աճելանում են ալդեհիդներ, ագետալների, ցնդող և տիրվող թթուների քանակները, որոնք դրական են անդրադառնում սպիրտների որակի վրա: Օքսիդանում են նաև բարձր սպիրտներն և սիվոլիսային յուղերը, որի հետևանքով այս միացությունները ասիմիլացվում են: Հնեցման ընթացքում աճելանում են \$ ուր \$ ուրոլների (\$ ուր \$ ուրոլ, մեթիլ \$ ուր \$ ուրոլ և օքսիմեթիլ \$ ուր \$ ուրոլ) քանակները, որոնք առաջանում են պենտոզների և հեքսոզների

դեհիդրատացումից: Ավելանում է նաև ընդհանուր և ամինաթթվային ազոտի և հանքանյութերի քանակները, որոնցից, ընդհանուր առմամբ հայտնաբերված են 37 միկրոէլեմենտ [6]:

Հնեցման պրոցեսի վրա ազդում է նաև կաղնու փայտի մշակման ձևը տակառների պատրաստելուց առաջ և հետո, ինչպես նաև տախտակների մշակումը արծնապատ պահամաններում հնեցնելու դեպքում: Հնեցման ինտենսիվության վրա ազդում է հնեցման մառանի ջերմաստիճանը և խոնավությունը: Ի.Մ. Սկուրիխինը [89] ուսումնասիրել է սպիրտների հնեցման յուրահատկությունները ջերմային տարբեր ռեժիմների պայմաններում: Փորձը կատարվել է Օդեսսայի կոնյակի գործարանի հնեցման մառանում՝ 620 տակառի վրա երկու տարի: Մասնավորապես բացահայտվել է, որ ջերմաստիճանի ավելացումից կտրուկ աճում են կորուստները, Ֆուրֆուրոլի քանակը 25 °C-ի հետ համեմատ 50 °C ջերմաստիճանի պայմաններում հնեցվելիս ենթադաստկվում է: Հետքեր է, որ 50 °C-ում հնեցման արդյունքում կոնյակի սպիրտը ձեռք էր բերել կոնյակին ոչ բնորոշ՝ ռոմային տոներ, որոնք, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են Ֆուրֆուրոլի չափից ավել կոնցենտրացիայով: Փորձերը ցույց են տալիս որ սպիրտների և ավազոյն հնեցումը տակառների մեջ կատարվում է 20 °C ջերմաստիճանի պայմաններում: Այս դեպքում հնեցումը ընթանում է բավականին ակտիվ՝ համեմատաբար քիչ կորուստներով: 20 °C-ից ցածր ջերմաստիճանային պայմաններում հնեցման ինտենսիվությունը կտրուկ իջնում է, սակայն կորուստների քանակի նվազում է աննշան չափով: 20 °C-ից ավելի բարձր ջերմաստիճաններում հնեցման

ընթացքն արագանում է, սակայն կորուստները բազմապատկվում են՝ այդ պայմաններում հնեցումը դարձնելով տնտեսապես աննպատակահարմար:

Կաղնու փայտի մշակման տարբերակները բավականին շատ են և զանազան՝ տարբեր երկրներում: Ֆրանսիական մեթոդով տակառատախտակները մինչև տակառի պատրաստումը չորացվում են բաց երկնքի տակ: Շոգ ամիսներին փայտերը ցնցուղներով ջրվում են աղբյուրի կամ արտեզյան չքլորացված ջրով, որը թույլ է տալիս ձերբագատվել «կոպիտ» դաբաղանյութերից: Այսինքն ֆորմացիան ապացուցում է Դ.Մ Գադջիևի կողմից կատարված փորձը [30], որի արդյունքներով ևս վազոնյան օրգանոլեպտիկ հատկություններ ունեին փայտի 5 տարվա բնական չորացումով մշակում անցած Ղարաբաղյան և Կազանի կաղնու փայտի մեջ հնեցում անցած սպիրտները: Այսպիսով հաստատվում է Ֆրանսիական տեխնոլոգիայի էֆեկտիվությունը:

### **1.6. Արտադրական մնացորդներին և թափոններին մշակում**

Արտադրական պրոցեսներում առաջացած մնացորդներին և թափոններին օգտագործումը, վերամշակումը՝ նոր տեսակի ապրանք ստեղծելու նպատակով, բերում է ևրացուցիչ գումար արտադրություն՝ իջեցնելով հիմնական արտադրանքի ինքնարժեքը:

Թունդ ալկոհոլային խմիչքների արտադրության ընթացքում՝ որպես օգտագործման ենթակա թափոններ, ստացվում են կորիզներ և թորման ընթացքում առաջացած գլխային և պոչային ֆրակցիայի սպիրտներ: Կորիզները՝ որպես թափոն,

ստացվում են թաց վիճակում՝ կորիզահան սարքից դուրս են գալիս ծիրանի քաղցույնով թրջված: Յաշվի առնելով, որ ծիրանի հասունացումը Յայաստանում համընկնում է տարվա ամենատաք ժամանակահատվածի հետ (հունիսի վերջից օգոստոսի սկիզբ)՝ բորբոսնելուց և թթվելուց պաշտպանելու համար, կորիզները պետք է անմիջապես լվանալ և չորացնել: Յայաստանի պայմաններում այդ ժամանակահատվածում չորացումը կարելի է իրականացնել արևի տակ փռելով՝ առանց լրացուցիչ էներգետիկ ծախս կատարելու: Չորացնելուց հետո կորիզները պետք է կոտրել միջուկի ստացման համար, որի իրականացման համար նպատակահարմար է օգտագործել թմբուկավոր կորիզ ջարդիչ մեքենաներ [87]: Կոտրելիս ստացվում են կորիզի միջուկներ և կորիզի կեղևներ: Ծիրանի կորիզի կեղևը օգտագործվում է որպես հումք՝ ակտիվացված ածուխի արտադրության մեջ, որպես սոսիսների արտադրության մեջ լցանյութի հումք և հղկանյութի հումք՝ տարբեր ոլորտներում օգտագործելու համար: Կորիզները կարող են օգտագործվել ամբողջական՝ հրուշակեղենի արտադրության մեջ, կորիզները կարելի է նաև մշակել՝ ստանալով ծիրանի կորիզի յուղ: Տարբեր երկրներում ծիրանի կորիզի միջուկների վերամշակումից ստանում են հալվա, մարցիպանային զանգված, անասնակեր, բենզալդեհիդ, ամիգդալին և կերերի համար սպիտակուցային քուսպ: Ընդ որում կորիզներից յուղն անջատելուց հետո մնացած զանգվածից ստանում են բենզալդեհիդ, որը մեծ կիրառում ունի բույրային նյութերի արտադրության մեջ, իսկ մնացած քուսպը համարվում է սպիտակուցային արժեքավոր

անասնակեր [41]: Թորման մնացորդները՝ գլխային և պոչային ֆրակցիան կարելի է վերաթորել ռեկտիֆիկացիոն աշտարակով՝ մաքրելով անցանկալի բաղադրիչներից և ստանալով բարձր թնդուլթյան սպիրտ, որը կարող է օգտագործվել թրմօղիների պատրաստման համար և կուպաժների մեջ:

Դեղձից ալկոհոլային խմիչք արտադրման ընթացքում որպես թափոն առաջանում են կորիզներ և պտղամաշկ, թորման ընթացքում՝ գլխային և պոչային ֆրակցիաները: Դեղձի կորիզից կարելի է ստանալ յուղ, որը համարժեք է ծիրանի կորիզի յուղին և օգտագործվում է նույն կերպ՝ բարձրակարգ կոսմետիկ կրեմների արտադրության մեջ և բժշկության մեջ: Յուղի ստացումից հետո քուսպից ստացվում են նաև ամիգդալին և ցիանիդներ, որոնք լայնորեն կիրառվում են տարբեր ոլորտներում: Դեղձի պտղամաշկը կարելի է օգտագործել նաև հնեցման պահամաններում՝ հնեցվող սպիրտին ավելացնելով: Այն սպիրտներին տալիս է լրացուցիչ փափկություն, թանձրություն, հարստացնում բուրմունքը՝ հաղորդում խմիչքին ոսկեգույներանգ:

Նման կերպ են մշակվում նաև սալորի արտադրական մնացորդները:

Կորիզները բորբոսելուց զերծ պահելու համար լվացվում են, չորացվում և պահպանվում թղթե պարկերի մեջ:

Թորման մնացորդները՝ գլխային և պոչային ֆրակցիաները վերաթորվում են ռեկտիֆիկացիոն աշտարակներում մաքրվում անցանկալի բաղադրիչներից և ստացված բարձր թնդուլթյան սպիրտը օգտագործվում թրմօղիների պատրաստման համար և կուպաժների մեջ [38,112]:

Ծիրանի, դեղձի և սալորի կորիզների բնութագրերը բերված են թիվ 3 աղյուսակում:

Աղյուսակ 3.

**Օդաչոր մրգային կորիզների միջին բնութագրեր**

№		պարունակությունը, %			
		կորիզը պտղում	կորիզի կճեպ	կորիզի միջուկ	ճարպային միացությունների միջուկում
1.	Ծիրան	7,7	71,0	29,0	51,3
2.	Դեղձ	8,1	94,3	5,7	46,7
3.	Սալոր	8,0	96,4	3,6	30,6



## **Գ Լ ՈՒ Խ 2.3 Ե Տ Ա 2 Ո Տ Մ Ա Ն Օ Բ Յ Ե Կ Տ Ն Ե Ր Ը Ե Վ Մ Ե Թ Ո Դ Ն Ե Ր Ը**


### **2.1. 3 Ե տ ա գ ո տ մ ա ն օ բ յ Ե կ տ ն Ե ր ը**

3 3 - ու մ պտղաբուծության զարգացմանը գնագահեռ առաջանում է, ստացվող քերքի իրացման խնդիրներ, ինչը կարևորում է վերամշակող արտադրություններում քարձրորակ մթերքների արտադրումը:

Ներքին և միջազգային շուկաներում քարձր սպառողական արժեքով ապրանք առաջարկելը, դրան անվտանգություն ապահովումը թելադրում են արտադրական քարձր կոլլտուրայի ձևավորում և կիրառվող տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործում: 3 3 սննդարդյունաբերությունում ծիրանից, դեղձից, սալորից հյութեր, կոմպոտներ, մուրաբաներ, չրեր արտադրելուց զատ, գնալով մեծանում է այդ մրգերից թունդ ալկոհոլային ըմպելիքների պահանջարկը և արտադրումը:

3 աշվի առնելով մեզանում և արտերկրում ձևավորված պահանջարկը, մրգերից արտադրվող թունդ ալկոհոլային ըմպելիքների արտադրական տեխնոլոգիաների կատարելագործման անհրաժեշտությունը, դրանց անվտանգության երաշխավորումը, ուսումնասիրման օբյեկտներ են ընտրվել ծիրանի, դեղձի, սալորի պտուղների, դրանց վերամշակման տեխնոլոգիական պրոցեսները, պատրաստի արտադրատեսակները, արտադրությունում օգտագործվող օժանդակ նյութերը:

3 Ե տ ա գ ո տ ու լ թ յ ու ն ն Ե ր ի ս խ Ե մ ա ն ք Ե ր վ ա ծ Ե ս խ Ե մ ա Ա - ու մ



հանդիսացել .

ա) ՀՀ-ում մշակվող ծիրանի, դեղձի և սալորի պտուղները:

բ) Արարատի «Աբրիկոս» ՍՊ ընկերությունում արտադրվող սպիրտահոլմքը և թունդալկոհոլային ըմպելիքները:

## **2.2.3 Ետազոտություն պայմանները և եղանակները**

Ատենախոսությունում ներկայացված հետազոտությունները իրականացվել են սկսած 2000 թ.-ից Արարատի «Աբրիկոս» ՍՊ ընկերությունում, ՀՀ ԱՆ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս.ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ փորձարկման և աբորատորիայում, «Երասխի Գինու Գործարան» ՍՊ ընկերությունում, «ԱԿԱՆ» ՍՊ ընկերությունում, «MAXEL MUSSY» SARL (Ֆրանսիա) ընկերությունում, Qingdao hiche wine & spirits Co. LTD (Չինաստան) ընկերությունում, Չինաստանի ԽՆԲԵՅ Նահանգի գյուղատնտեսության նախարարության զարգացման գործակալության արտադրական տարբեր ձեռնարկություններում և ՀԱԱՀ «Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիա»-ի ամբիոնում:

ՀՀ Արարատի «Աբրիկոս» ՍՊ ընկերությունում.

- հոլմքի ընդունում, պահպանում, նախնական մշակում, խմորում, թորում, արտադրական փորձարկումներ, արտադրություն,

- սպիրտահոլմքի հնեցում,
- պատրաստի ըմպելիքների ստացում,
- աշխատանքային համտեսներ,

- խմիչքներում մեթանոլի պարունակության չեցմանն ուղղված տարբեր փորձեր և աշխատանքներ ,

- ՀՀ ԱՆ «ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս.ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ սանիտարահիգիենիկ

փորձարկման և արտոտորիայում .

- հումքի , կիսապատրաստուկների և պատրաստի արտադրանքի կենսաքիմիական և ֆիզիկական ցուցանիշների որոշումներ ,

- պատրաստի արտադրատեսակների անվտանգության ցուցանիշների որոշումներ ,

- աշխատանքային համտեսներ ,

- պատրաստի արտադրանքի սերտի ֆիկացում

«Երասխի Գինու Գործարան» ՍՊ

ընկերությունում արտադրական

տեխնոլոգիաներին , տեխնոլոգիական

ռեժիմներին վերաբերվող քննարկումներ ,

- ծիրանի մթերում ,խմորում և թորում ,

- կիսապատրաստուկների և պատրաստի արտադրանքի համտեսներ ,

«ԱԿԱՆ» ՍՊ ընկերությունում

- կաղնու փայտի մշակման տեխնոլոգիա

- տակառների արտադրություն

«MAXEL MUSSY» SARL

- խմիչքի և սպիրտահումքի տարբեր փուլերում աշխատանքային համտեսներ ,

- հնեցված սպիրտահումքից կուպաժների կազմում

Qingdao hiche wine & spirits Co. LTD (Չինաստան)

ընկերությունում

- ՀՀ տարածքից Արարատի «Աբրիկոն» ՍՊ

ընկերությունից ստացված հնեցված

սպիրտահոլմքի ստացում, մշակում, կուպած և  
շշալցում,

- Աշխատանքային համտեսներ

Չինաստանի ԽՐԲԵՅ նահանգի

գյուղատնտեսություն և ախարարություն

գարգացման գործակալության արտադրական

տարբեր ձեռնարկություններում

- ամերիկյան բուրբոնների տեխնոլոգիայով  
ծիրանի և այլ ծագման սպիրտահոլմքերից խմիչքի  
ստացում,

- կորիզավոր մրգերից խմիչքի արտադրություն  
տեխնոլոգիական սխեմաների մշակում,

- աշխատանքային համտեսներ,

- հոլմքի, կիսապատրաստուկների և վերջնական  
արտադրանքի կենսաքիմիական և ֆիզիկական  
ցուցանիշների որոշումներ,

ՀԱԱՀ «Բուսաբուծական մթերքների  
վերամշակման տեխնոլոգիա»-ի ամբիոնում  
իրականացվել են հետևյալ աշխատանքները .

- փորձարարական ճանապարհով  
հոլմքատեսակների մշակման նախնական  
պրոցեսների ռեժիմների հաստատում,

- տեխնոլոգիական պրոցեսներում հոլմքի  
կորուստների քանակների ճշգրտում,

- հոլմքի և կիսապատրաստուկների  
կենսաքիմիական և ֆիզիկական ցուցանիշների  
որոշումներ,

- աշխատանքային համտեսներ,

- պատրաստի ըմպելիքների բաղադրատոմսերի  
կազմում, փորձանմուշների պատրաստում,

- քացախների արտադրական տեխնոլոգիական  
մշակում,

- հ ու մ ք ա տ Ե ս ա կ ն Ե ր ի և պատրաստի խմիչքների կենսաքիմիական և ֆիզիկական ցուցանիշների որոշումներ

- ս ա լ ո Ր ի ք ա գ ա խ ի ս տ ա գ մ ա ն տ Ե խ ն ո լ ո գ ի ա յ ի մ շ ա կ ու մ

Աշխատանքների կատարման ընթացքում համագործակցել ենք նշված արտադրական և գիտական կազմակերպությունների աշխատակիցների հետ:

Հ ու մ ք ը ու ս ու մ ն ա ս ի ր Ե լ ի ս ո Ր ո շ վ Ե լ Ե ն վ Ե ր ա մ շ ա կ մ ա ն պրոցեսներում գոյացող մնացորդների և թափոնների ընդհանուր և լուծելի չոր նյութերի, ընդհանուր շաքարների, թթուների և այլ բաղադրիչների պարունակությունները:

Փորձարարական և արտադրական պրոցեսներում վերահսկվել է խմորման տեխնոլոգիական պրոցեսը, որոշվել հ ու մ ք ի Բ ն ա փ ո խ մ ա ն Ժ ա մ ա ն ա կ առաջացող արգասիքների պարունակության չափերը, ու ս ու մ ն ա ս ի ր վ Ե լ պրոցեսի ընթացքը:

Կիսապատրաստուկները և պատրաստի մթերքները հետազոտվել են որոշելով, Ե թ ի լ ս պ ի ր տ ի ծ ա վ ա լ ա յ ի ն տ ո կ ո ս ը , մ Ե թ ի լ ս պ ի ր տ ի , ց ն դ ո ղ թ թ ու ն Ե ր ի , Բ ա ր ծ ր ս պ ի ր տ ն Ե ր ի , ա լ դ Ե հ ի դ ն Ե ր ի , Ե թ Ե ր ն Ե ր ի , ծ ա ն ր մ Ե տ ա ղ ն Ե ր ի , հ ա ն ք ա յ ի ն ա ղ Ե ր ի պարունակությունները և խտությունը:

Կենսաքիմիական և ֆիզիկական ցուցանիշների որոշման աշխատանքները իրակացվել են տեխնոքիմիական վերահսկողության հրահանգներին և տեխնիկական պայմաններին համաձայն [5,28,41,43,57,65,66,71,91]:

Պատրաստի ըմպելիքների նորարարատեսականիների արտադրման համար մշակվել է տեխնիկական պայմաններ, ստացվել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության:

**Գ Լ Ո Ւ Խ 3. Կ Ո Ր Ի Զ Ա Վ Ո Ր Մ Ր Գ Ե Ր Ի Ց Թ Ո Ւ Ն Դ  
Ա Լ Կ Ո Յ Ո Լ Ա Յ Ի Ն Ը Մ Պ Ե Լ Ի Ք Ն Ե Ր Ի Ե Լ Ա Ն Յ Ո Ւ Թ Ե Ր Ի  
Ա Ր Տ Ա Դ Ր Մ Ա Ն Տ Ե Խ Ն Ո Լ Ո Գ Ի Ա**

**3.1. Ծի ր ա ն ի և դ ե ղ ձ ի պ տ ո ւ ղ ն ե ր ի տ ե խ ն ո լ ո գ ի ա կ ա ն  
գ ն ա հ ա տ ո ւ մ**

Կ ո Ր ի զ ա վ ո Ր պ տ ո ւ ղ ն ե ր ի ց թ ո ւ ն դ ա լ կ ո հ ո լ ա յ ի ն ը մ պ ե լ ի Ք ն ե ր ար տ ա դ Ր Ե լ ո ւ հ ա մ ար ա ն հ Ր ա ժ Ե շ տ Ե հ ե ռ ա ց ն ե լ կ ո Ր ի զ ը և ս տ ա ն ա լ հ ո ւ մ Ք ի տ Ր ո Ր ա ծ զ ա ն գ վ ա ծ : Կ ո Ր ի զ ա վ ո Ր պ տ ո ւ ղ ն ե ր ի ց հ յ ո ւ թ ե Ր և ա յ լ տ ե ս ա կ ի պ ա հ ա ծ ո ն ե Ր ար տ ա դ Ր Ե լ ի ս հ ո ւ մ Ք ը Ե ն թ ար կ վ ո ւ մ Ե շ ո կ մ ա ն , տ ե ս ա կ ա վ ո Ր մ ա ն , լ վ ա ց մ ա ն , շ ո գ Ե հ ար մ ա ն , կ ո Ր ի զ ա ն ջ ա տ մ ա ն , տ Ր ո Ր մ ա ն : Ս տ ա ց վ ա ծ մ Ր գ ա յ ի ն խ յ ո ւ ս ը օ գ տ ա գ ո Ր ծ վ ո ւ մ Ե պ տ ղ ա մ ս ո վ պ տ ղ ա հ յ ո ւ թ ե Ր , պ ո վ ի դ լ ա ն ե Ր , մ ար մ Ե լ ա դ ն ե Ր , մ Ր գ ա յ ի ն ս ո ո ւ ս ն ե Ր և ա յ լ ն ար տ ա դ Ր Ե լ ո ւ հ ա մ ար [1,87,128]:

Թ ո ւ ն դ ա լ կ ո հ ո լ ա յ ի ն ը մ պ ե լ ի Ք ն ե ր ար տ ա դ Ր Ե լ ի ս ա ն հ Ր ա ժ Ե շ տ չ Ե հ ո ւ մ Ք ի ց պ տ ղ ա կ Ե ղ և ի հ ե ռ ա ց ո ւ մ ը և կ ո Ր ի զ ա ն ջ ա տ ո ւ մ ի ց հ ե տ ո զ ա ն գ վ ա ծ ի տ Ր ո Ր ո ւ մ ը , ի ս կ Բ ար ձ Ր ո Ր ա կ ար տ ա դ Ր ա ն Ք ս տ ա ն ա լ ո ւ հ ա մ ար պ ե տ Ք Ե Բ ա ց ա ռ Ե լ շ ո գ Ե հ ար մ ա ն տ ե խ ն ո լ ո գ ի ա կ ա ն պ Ր ո ց Ե ս ը : Ս ա կ ա յ ն շ ո գ Ե հ ար Ե լ ի ս պ տ ո ւ ղ ն ե Ր ո ւ մ պ ար ո ւ ն ա կ վ ո ղ պ Ր ո տ ո պ Ե կ տ ի ն ը հ ի դ Ր ո լ ի գ վ ո ւ մ Ե մ ի ն չ և լ ո ւ ծ Ե լ ի պ Ե կ տ ի ն ի , ի ն չ ո վ հ Ե շ տ ա ց ն ո ւ մ կ ո Ր ի զ ա ն ջ ա տ մ ա ն և հ ե տ ա գ ա տ Ր ո Ր մ ա ն պ Ր ո ց Ե ս ն ե Ր ը , կ Ր ճ ա տ ո ւ մ կ ո Ր ո ւ ս տ ն ե Ր ը [124]:

Ա կ ն հ ա յ տ Ե , ո Ր կ ո Ր ի զ ա վ ո Ր մ Ր գ Ե Ր ի ց թ ո ւ ն դ ա լ կ ո հ ո լ ա յ ի ն ը մ պ ե լ ի Ք ն ե Ր ի ար տ ա դ Ր մ ա ն հ ա մ ար ա ն հ Ր ա ժ Ե շ տ Ե օ գ տ ա գ ո Ր ծ Ե լ մ Ր գ Ե Ր ի ա յ ն պ ի ս ի ս ո Ր տ Ե Ր , ո Ր ո ն Ք ա չ Ք ի Ե ն ը ն կ ն ո ւ մ շ ա Ք ար ն ե Ր ի մ Ե ծ պ ար ո ւ ն ա կ ո ւ թ յ ա մ Բ , տ ե խ ն ի կ ա կ ա ն հ ա ս ո ւ ն ա ց մ ա ն

փոփոխումներն թույլ ամրությունը պտղամիս: Ինչը հնարավոր կդարձնի առանց շոգեհարման տեսնելու գիական պրոցեսի իրականացնել կորիզանջատում:

Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերությունը ծիրանի և դեղձի թուփն ալկոհոլային ըմպելիքների արտադրման համար հոլմքը մթերում է Արարատի և Արմավիրի մարզերի գյուղերից:

Մեր կողմից 2014-2017 թթ. ընթացքում որոշվել է ՀՀ-ում տարածված ծիրանի «Երևանի», «Սաթենի դեղին» և դեղձի «Նարինջի Երևանի» սորտերի, թուփն ալկոհոլային ըմպելիքների արտադրման համար անհրաժեշտ տեսնելու գիական բնութագրերը:

Խմորման համար պիտանի զանգված ստանալու նպատակով Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերությունում օգտագործվում է կորիզավոր պտուղների համար նախատեսված КРУ-М կորիզանջատող մեքենա, որի տրորող լիսեռի պտուղ տներին թիվն է՝ 700 պտուղ/րոպե:

Կորիզանջատող մեքենայի թմբուկի անցքերի տրամագիծը շոգեհարված հոլմքի համար նախատեսված է 1,2; 1,5 և 3,0 մմ: Իրականացված բազմակի փորձերի արդյունքում, հոլմքի կորուստների կրճատման համար, չժանգոտվող պողպատյա մաղերից պատրաստվեց ծիրանի համար 5,0 և դեղձի համար 7,0 մմ անցքերի տրամագիծ ունեցող թմբուկներ:

Խմորման համար պիտանի զանգված ստանալու և կորուստները կրճատելու համար, կորիզանջատող մեքենայի բնութագրից գատ կարևորվում է նաև հոլմքի հասունացման աստիճանը: Ինչի համար արտադրությունում ջուրում, տեսակավորում պրոցեսներին իրականացման արդյունքում, ամուր պտղամսով պտուղները արկղերով պահպանվել են



հոլմքային հրապարակում որոշակի տևողությամբ, պտղամսի միջին ամրությունը որոշվել պենետրոմետրով և պահանջվող սահմանին հասնելով՝ մատուցվել հետագամշակման:

Բազմակի փորձերի արդյունքներով ծիրանի պտուղների կորիզանջատման համար նպաստավոր վիճակ է գնահատվել առավելագույնը 0,43 կգ/սմ<sup>2</sup> և դեղձի համար 0,67 կգ/սմ<sup>2</sup> պտղամսի ամրությունները:

Հոլմքի մշակման ժամանակահատվածում ցերեկային ժամերին օդի ջերմաստիճանը բարձր է 30 °C-ից, գիշերայինը 20 °C-ից և մշակման պահանջվող հասունացման աստիճանին հասնելու համար պահանջվող տևողությունը չի գերազանցել 15 ժամը:



Նկ.5.3 ասունացման դրված ծիրանի պտուղներ

Փորձնական տվյալների ճշտորոշության համար պտուղների միջին զանգվածը, բաղադրիչ մասերի հարաբերությունը և պտղամսի ամրությունը, կատարվել է միջին նմուշ վերցնելով, որից կազմվել է միջին փորձանմուշ (50 պտուղ), որոշվել ամբողջական պտուղներով: Մնացած ցուցանիշների որոշման համար նմուշառում է կատարվել

կորիզան ջատոլ մից հետո խմորման տարողությունները սրված, ոչ պակաս 2 տգանգվածից: Յաշվի առնելով այն հանգամանքը, որ հոլլիս և օգոստոս ամիսներին ծիրանի և դեղձի գանգվածների խմորման տևողությունները կազմում են 3 օր, փորձարկումները կատարվել են բոլոր բերքահավաքի ընթացքում 40 րպարբերությամբ:

Փորձնական աշխատանքների արդյունքները բերված են թիվ 1 և թիվ 2 աղյուսակներում:

Պտուղների և կորիզների միջին գանգվածը որոշվել է կշռումներով, պտղամասի ամրությունը 1 մմ ասեղի հաստությամբ պետետրոմետրով, ընդհանուր չոր նյութերը՝ չորացման արբիտրաժային եղանակով, լուծելի չոր նյութերը՝ ռեֆրակտոմետրով:

Տիտրվող թթվություն, ընդհանուր շաքարների և մոխրի որոշումները համաձայն ԳՈՍՏ № 3624-92, ԳՈՍՏ 8756.13-87, ԳՈՍՏ 25555.4-91:

Կատարված գիտափորձնական աշխատանքի արդյունքներով հնարավոր է եզրակացնել՝

- ըստ ծիրանի «Երևանի», «Սաթենի դեղին» և դեղձի «Նարնջի երևանի» սորտերի տեխնոլոգիական բնութագրերի, պտուղները լիովին օգտագործելի են թունդ ալկոհոլային ըմպելիքների արտադրման համար,
- առանց ջերմային մշակման ծիրանի կորիզների ջատոլմը հնարավոր է իրականացնել թմբուկի 5 մմ անցքերի տրամագիծ ունեցող կորիզան ջատող մեքենայով, պտղամասի առավելագույնը 0,43 կգ/սմ<sup>2</sup> ամրության պայմաններում և միևնույն 0,67 կգ/սմ<sup>2</sup> ամրությամբ դեղձինը 7 մմ թմբուկի անցքերի տրամագիծ ունեցող կորիզան ջատող մեքենայով:

Աղյուսակ 4.

**Ճիրանի «Երևանի» և «Սաթենի դեղին» սոբտերի տեխնոլոգիական ցուցանիշներ**

№	Ցուցանիշներ	«Երևանի»										«Սաթենի դեղին»	
		2014թ.			2015թ.			2017թ.			միջինը	2017թ.	
		03.07	07.07	11.07	03.07	07.07	11.07	05.07	09.07	13.07		15.07	19.07
1.	Պտուղների միջին զանգվածը, գ.	58,0	69,0	72,0	61,0	77,0	71,0	70,0	69,0	68,0	68,0	43,0	45,0
2.	Պտղամսի ամրություն, կգ/մմ <sup>2</sup>	0,38	0,36	0,36	0,37	0,31	0,31	0,39	0,32	0,33	0,35	0,42	0,39
3.	Կորիզների զանգված, %	4,97	5,20	5,04	5,18	5,11	5,20	5,23	5,19	5,23	5,15	7,10	7,14
4.	Ընդհանուր չոր նյութեր, %	16,33	17,54	17,62	16,48	17,70	18,14	17,01	17,92	17,88	17,4	19,64	21,87
5.	Լուծելի չոր նյութեր, %	15,4	16,6	16,7	15,5	16,8	17,2	16,0	17,0	16,9	16,5	18,8	20,84
6.	Տիտրվող թթվություն, գ/դմ <sup>3</sup>	9,48	8,19	8,0	8,37	7,93	7,42	9,94	8,42	7,69	8,38	7,04	6,41
7.	Շաքարներ, գ/դմ <sup>3</sup>	95,3	107,4	107,7	100,0	109,2	113,4	100,8	109,4	110,1	106,0	117,3	125,6
8.	Մոխիր, %	0,68	0,66	0,66	0,67	0,69	0,66	0,72	0,68	0,68	0,67	0,92	0,90


**Աղյուսակ 5.**  
**Դեղձի «Նարնջի Երևանի» սորտի տեխնոլոգիական ցուցանիշներ**

№	Ցուցանիշներ	«Նարնջի Երևանի»									
		2014թ.			2015թ.			2016թ.			Միջինը
		14.08	17.08	21.08	18.08	22.08	26.08	15.08	19.08	23.08	
1.	Պտուղների միջին զանգվածը, գ.	111,0	123,0	118,0	167,0	143,0	141,0	107,0	116,0	118,0	127,0
2.	Պտղամսի ամրություն, կգ/մմ <sup>2</sup>	0,61	0,57	0,52	0,58	0,47	0,47	0,67	0,49	0,46	0,48
3.	Կորիզների զանգված, %	7,88	7,52	7,54	7,63	7,68	7,54	7,49	7,58	7,61	7,60
4.	Ընդհանուր չոր նյութեր, %	15,41	15,62	16,71	16,30	16,43	17,32	17,08	17,18	17,39	16,6
5.	Լուծելի չոր նյութեր, %	14,37	14,53	15,59	15,21	15,37	16,34	16,12	16,13	16,20	15,54
6.	Տիտրվող թթվություն, գ/դմ <sup>3</sup>	5,51	4,60	4,32	5,04	4,11	4,16	5,17	4,08	3,89	4,54
7.	Շաքարներ, գ/դմ <sup>3</sup>	87,8	90,2	90,7	90,1	90,9	92,3	92,1	92,1	92,4	90,9
8.	Մոխիր, %	0,47	0,50	0,49	0,52	0,54	0,49	0,49	0,53	0,53	0,50

**3.2. Ծիրանի և դեղձի պտուղների նախնական մշակում և խմորում «Աբրիկոն» ՍՊ ընկերությունում**

Խմորման համար անհրաժեշտ պտղային զանգված ստանալու և կորիզների անջատման համար մինչև 2014 թ. Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերությունում կիրառվում էր վալցային ջարդիչ, այնուհետև ջարդված զանգվածի տրորում:

Ընդ որում վալցային ջարդիչ կիրառելիս, որպեսզի բացառվի կորիզների ջարդումը, անհրաժեշտ էր իրականացնել պտուղների չափարկում: Հոլմքի զանգվածային բերքահավաքի պայմաններում, մթերված հոլմքը ունենում էր հասունացման տարբեր աստիճաններ, ինչը դժվարացնում էր չափարկման իրականացումը: Ջարդված զանգվածում կորիզների կտորների առկայությունը, անցանկալի էր, թե որակական և թե տրորող մեքենայի թմբուկի հաճախակի պատռվելու տեսնիկական տեսակետներից: [128]



Նկ .6, Նկ .7. Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերության խմորման  
բաժանմունք

Բազմակի փորձերի արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ բացառելով ջարդման պրոցեսը հնարավոր է իրականացնել տրորված զանգվածի ստացում, հոլմքի հասունացման որոշակի աստիճանի ապահովումով և միաստիճանի տրորող մեքենայի թմբուկի անցքերի տրամագիծը փոփոխելով:

Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերությունում մթերված հոլմքը ժապավենային փոխադիր չի վրա ենթարկվում է շոկման տեսակավորման և մատուցվում միաստիճանի տրորող մեքենա: Տեսակավորման տեխնոլոգիական պրոցեսում թերհասունացած պտուղները առանձնացվում են և արկղերով պահպանվում բնական քամհարմամբ հոլմքային հրապարակներում և հասունացման պահանջվող աստիճանի հասնելուց հետո մատուցվում տրորման:

Տրորման ընթացքը հեշտությամբ իրականացնելու համար ծիրանի պտուղները տրորվում են թմբուկի 5 մմ, իսկ դեղձինը 7 մմ անցքերի տրամագծով տրորող մեքենաներով:

Տրորումից ստացված խյունը կենտրոնախուլյս պոմպով մղվում է խմորման տարողություններ: Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերությունում խմորման տեխնոլոգիական պրոցեսը իրականացվում է 20 մ<sup>3</sup> բանվորական ծավալով խմորման շապիկավոր չժամգոտվող պողպատյա տարողություններում:

Խմորման տարողության լցվելուց անիջապես հետո կենտրոնախուլյս պոմպով անընդհատ խառնելով տրվում է “Primaflora VB Blanc Levures” տեսակի խմորասուունկ 0,3

գ/լ ի տր չ ափո վ : Պեկտինային նյութերի քայքայման և մեթանոլի առաջացումը կանխելու համար խմորասնկի ներմուծմանը զուգահեռ տրվում է 0,1 գ/լ ի տր չ ափո վ “Vinoferm zymex” ֆերմենտային պատրաստուկ :

Խմորման ընթացքը ցանկալի է 22...25 °C-ում տանելու համար , իրականացվում է խմորման տարողու թյուններին շապիկներ անընդհատ 15 °C-ից ոչ քարձր ջերմաստիճանի ջուր մղել , որը ստացվում է սառնարանային տեղակայանքի պատյանախողովակային գոլորշացուցիչում ջրի շրջապտույտով :

Չաշվի առնելով այն հանգամանքը , որ խմորված զանգվածի թնդությունը ցածր է (5-7 %), որի պատճառով հնարավոր է կանխել տարբեր վարակներն ու քացախաթթվային խմորումը , խմորման պրոցեսի ավարտի վերահսկումը իրականացվում է փորձնական քանակների թորումով ; Խմորումը կախված ջերմաստիճանային պայմաններից , կազմում է 4-6 օր : Խմորման ավարտը , բացի փորձնական թորումների իրականացումից հաստատվում է նաև մնացորդային շաքարների և ցնդող թթուների որոշումներով :

Խմորման ավարտից անմիջապես հետո զանգվածը ենթարկվում է թորման :

**20 մ<sup>3</sup> ծավալով ծիրանի և դեղձի խմորված խյուն և ստանալու համար հումքի և նյութերի անհրաժեշտ քանակները**

**Ծիրան**

1. Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերությունում մթերվող ծիրանի լուծելի չոր նյութերի պարունակությունը միջինը կազմում է  $C = 15 \%$ ,

որը հաշվի առնելով  $V = 20 \text{ մ}^3$  ծավալում  
կտեղանքով

$$S_1 = V \cdot g = 20000 \cdot 1,059 = 21180 \text{ կգ},$$

որտեղ  $g$  - ծիրանի խյուսի խտությունն է, կգ/մ<sup>3</sup> և  
հաշվարկում է փորձնական բանաձևով:

$$g = \frac{267}{267-c} = \frac{267}{267-15} = 1,059 \text{ կգ/մ}^3:$$

2. Ծիրանի 21180 կգ տրորված զանգված ստանալու  
համար պահանջվող հոլմքի քանակը կկազմի

$$T_1 = \frac{S_1 \cdot 100}{100 - P_1} = \frac{21180 \cdot 100}{100 - 10,5} = 23665 \text{ կգ},$$

որտեղ  $P_1$  - հոլմքի կորուստները տրորման  
տեխնոլոգիական պրոցեսում, որը կազմված է  
կորիզներից, պողպատե դեղնուց և պողպատե թերից, միջինը  
 $P_1 = 10,5\%$ :

3. Ծիրանի 23665 կգ տրորման մատուցվող զանգված  
ստանալու համար, ջրկման տեսակավորման տրվող  
հոլմքի քանակը կկազմի

$$T_2 = \frac{T_1 \cdot 100 \cdot 100}{(100 - P_2)(100 - P_3)} = \frac{23665 \cdot 100 \cdot 100}{(100 - 1,3)(100 - 0,32)} = 24053 \text{ կգ},$$

որտեղ  $P_2$  - ջրկման և տեսակավորման տեխնոլոգիական  
պրոցեսում տեղի ունեցող կորուստներ  $P_2 = 1,3\%$ ,  $P_3$  -  
հասունացման համար հոլմքային հրապարակում  
պահպանվող հոլմքից գոլորշացումով  
պայմանավորված հոլմքի զանգվածի կորուստներ  $P_3 =$   
 $0,32\%$ :

4. Խմորման տրվող տրորված զանգվածում  
շաքարների պարունակությունը կկազմի

$$S_2 = \frac{S_1 \cdot n}{100} = \frac{21180 \cdot 9,5}{100} = 2012,1 \text{ կգ}:$$

5. Խմորման պրոցեսում տեղի ունեցող շաքարների  
կորուստները և խմորված զանգվածում  
մնացորդային շաքարների գումարային  $P_4 = 2,9\%$



հաշվի առնելով խմորման ենթակա շաքարների քանակը կկազմի

$$S_3 = \frac{S_2 \cdot (100 - P_4)}{100} = \frac{2012 \cdot (100 - 2,9)}{100} = 1953 \text{ կգ:}$$

### Դեղձ

1. «Աբրիկոս» ՍՊ ընկերությունում մթերվող դեղձի և լոծելի չոր նյութերի պարունակությունը միջինը կազմում է  $C = 14\%$  և  $20\%$  ծավալում կտեղավորվի

$$S_1 = V \cdot g = 20000 \cdot 1,055 = 21100 \text{ կգ,}$$

$$g = \frac{267}{267 - 14} = 1,055 \text{ կգ/դմ}^3:$$

2. Պահանջվող դեղձի քանակը`

$$T_1 = \frac{S_1 \cdot 100}{100 - P_1} = \frac{21100 \cdot 100}{100 - 17,2} = 25483 \text{ կգ,}$$

դեղձի կորուստները`  $P_1 = 17,2\%$ :

3. Ջուրման և տեսակավորման մատուցվող դեղձի քանակը

$$T_2 = \frac{T_1 \cdot 100 \cdot 100}{(100 - P_2)(100 - P_3)} = \frac{25483 \cdot 100 \cdot 100}{(100 - 1,4)(100 - 0,41)} = 25951 \text{ կգ,}$$

ըստփորձակաև տվյալների  $P_2 = 1,4\%$  և  $P_3 = 0,41\%$ :

4. Շաքարների պարունակությունը տրորված գանգվածում

$$S_2 = \frac{S_1 \cdot n}{100} = \frac{21100 \cdot 8,7}{100} = 1835,7 \text{ կգ:}$$

5. Առանց խմորման պրոցեսի  $P_4 = 2,9\%$  կորուստների` շաքարի քանակը կկազմի

$$S_3 = \frac{S_2 \cdot (100 - P_4)}{100} = \frac{1835,7 \cdot (100 - 2,9)}{100} = 1782,5 \text{ կգ:}$$

Ելնելով 4 տարիների արտադրակաև փորձարկումներից օգտագործված ելակետային տվյալները միջինացված են:

Աղյուսակ 6.

**20 մ<sup>3</sup> ծավալ ով ծիրանի և դեղձի խյուսերի ստացման և  
խմորման ցուցանիշները**

№	Քանակները և տեխնոլոգիական պրոցեսները	երը և տեխնոլոգիական պրոցեսներ	Ծիրան	Դեղձ
1.	Խմորման տրվող քանակ, մ <sup>3</sup>	-	20000	20000
2.	Խմորման տրված խուլյսի զանգված, կգ	-	21180	21100
3.	Տրորման տրվող ծիրանի զանգված, կգ	10,5	23665	-
4.	Տրորման տրվող դեղձի զանգված, կգ	17,2	-	25483
5.	Ջուր և տեսակավորման մատուցվող ծիրանի զանգված, կգ	1,62	24053	-
6.	Ջուր և տեսակավորման մատուցվող դեղձի զանգված, կգ	1,81	-	25951
7.	Շաքարների պարունակությունը խմորման տրված խյուսում, կգ	-	2012,1	1835,7
8.	Խմորման ենթակա շաքարների զանգվածը, կգ	2,9	1953,0	1782,5

Արտադրողական գիտափորձարարական աշխատանքների արդյունքով ստացված տվյալներից հնարավոր է եզրակացնել

- հասունացման պահանջվող աստիճանի պտուղներին խյուսի ստացումը լինվին հնարավոր է առանց հոլմքի նախնական ջարդման,
- խմորման ընթացքը մինչև 25 °C-ում տանելու համար 20 մ<sup>3</sup> ծավալով խմորման տարողու թյուղներին շապիկում անհրաժեշտ է ապահովել 15°C-ից ոչ քարձր ջերմաստիճան,
- ծիրանի խյուսում խմորման ենթակա շաքարների քանակը միջինում գերազանցում է դեղձի խյուսին 1,03անգամ,
- միավոր ծավալի խյուս ստանալու համար դեղձի պահանջվող զանգվածը, գերազանցում է ծիրանի զանգվածին 1,08անգամ:

### **3.3. Ծիրանի և դեղձի խմորված զանգվածի թորում**

Ալկոհոլային թորումը հանդիսանում է սպիրտների ստացման ամենահիմնական պրոցեսներից մեկը: Թորման ենթարկում են լուծույթներ, որոնցում պարունակվում են գոլորշիացող բաղադրիչներ: Թորելիս՝ ելանյութը տաքացվում է մինչև հագեցման ջերմաստիճանի, որի հետևանքով առաջացած գոլորշիները անցնում են ջերմափոխանակիչով և կոնդենսացվում: [63,64,84,89]

Սպիրտը և ջուրը միմյանց մեջ լուծվում են ցանկացած հարաբերակցությամբ: Այդպիսի լուծույթները կոչվում են բինար լուծույթներ: [108]

Օդու և սպիրտի արտադրությունում ելանյութը կարելի է դիտարկել որպես ջրասպիրտային լուծույթ՝ կազմված սպիրտի (A) և ջրի (B) բաժիններից:

A և B բաղադրիչների մոլեկուլների միջև առանձին, ինչպես և համատեղ, գործում են փոխադարձ ձգողականության ուժեր, և եթե բոլոր ուժերը

հավասարաչափ են  $P_{AA}=P_{BB}=P_{AB}$ , ապա A և B հեղուկները փոխադարձ լուծելի են ցանկացած հարաբերությամբ:

Սպիրտ-ջուր լուծույթի ամենկազմային բաժնին համապատասխանում է իրեն հագեցման ջերմաստիճանը: Որքան լուծույթում փոքր է հագեցման ցածր ջերմաստիճանը, նեցողքադադրիչը A, այնքան լուծույթն ավելի բարձր ջերմաստիճանում է եռում: Եռման ամենաբարձր ջերմաստիճանը համապատասխանում է մաքուր B բաղադրիչի հագեցման ջերմաստիճանին: Գոյություն ունի բինար լուծույթների առանձնացման երկու հիմնական եղանակ. պարզագույն թորում և ռեկտիֆիկացիա:

Պարզ թորումը սովորաբար կիրառվում է հեղուկ խառնուրդներից, դժվար գոլորշացող խառնուրդների, կեղտոտվածությունների, խեժերի անջատման համար: Բինար խառնուրդների թորման ժամանակ A բաղադրիչի մեծ մասը առավել ցածր ջերմաստիճաններում վերածվում է գոլորշու, որը ջերմափոխանակիչում կոնդենսացվելով վերածվում է դիստիլլատի: Առավել բարձր ջերմաստիճաններում եռացող B բաղադրիչի մի մասը հեռանում է A բաղադրիչի հետ, իսկ հիմնական մասը մնում է թորման ապարատում:



Նկ.8.Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերության թորման բաժանմունք

Պարզ թորման եղանակով A և B բաղադրիչների լիովին բաժանում հնարավոր չէ: Սակայն դիստիլլյատում A բաղադրիչի քանակը լինում է ավելի, քան A+B ելանյութում:

Թորման ընթացքում ապարատում A բաղադրիչի պակասեցմանը զուգահեռ բարձրանում է մնացորդի եռման ջերմաստիճանը, իսկ առաջացող գոլորշու կազմը գնալով աղքատանում է A բաղադրիչով՝ հարստանալով B բաղադրիչով: [109]

Արարատի «Աբրիկոն» ՍՊ ընկերությունում մրգային խյուսի խմորված զանգվածից թունդ ալկոհոլային ըմպելիքներ արտադրելու համար իրականացվում է կրկնակի թորում: Յաշվի առնելով խմորման տարողությունների ծավալները ( $20 \text{ մ}^3$ ) և խմորման ավարտից հետո խմորված զանգվածի հնարավորինս արագ թորման մատուցելու պարտադրանքը, արտադրությունում գործարկվում է թորման  $5 \text{ մ}^3$  բանվորական ծավալով շարանտական հինգ ապարատներ, որոնցից մեկը նախատեսված է առաջին թորման արգասիք սպիրտահուլձի թորման համար:

Առաջնային թորումը գուգահեռաբար իրականացվում է չորս ապարատներում: Թորման համար ապարատների օձագալար խողովակներով չոր հագեցած գոլորշու մատուցումը սկսվում է երբ ջերմափոխանակիչները 50-70 մմ շերտով ծածկված են լինում խմորված գանգվածով: Տաքացման մակերեսներին այրվածքների առաջանալուց խուսափելու համար մատուցվող չոր հագեցած գոլորշու ճնշումը կարգավորվում է 120-150 կՊա սահմաններում: Առաջին թորումը շարունակվում է մինչև խմորված գանգվածից սպիրտի լրիվ կորզումը: Նման պայմաններում ապարատի մեկ փուլի աշխատանքային տևողությունը կազմում է 14-15 ժամ:

Առաջին թորման սպիրտահումքը ստացվում է 20-25% թնդուլթյամբ:

Սպիրտահումքի երկրորդ թորումը տարվում է գոլորշու մինչև 130 կՊա ճնշման պայմաններում: Թորվածքի գլխային ֆրակցիան, որը կետոնային նյութերի, ալդեհիդների, պարզ էթերների և մեթանոլի մեծ պարունակություներով պատճառով ունենում է յուրահատուկ սուր հոտ, անջատվում է թորման տեղակայանքի առաջին ջերմափոխանակչով: Անջատվող գլխային ֆրակցիայի քանակը որոշվում է հաշվարկային եղանակով և օրգանոլեպտիկ գնահատմամբ: Միջինը գլխային ֆրակցիայի քանակը կազմում է 3%-7%: Հիմնական թորվածքը (սիրտ), որի երկրորդային գոլորշիները կոնդենսացվում են երկրորդ (հիմնական) ջերմափոխանակչով ունենում է հումքին բնորոշ բույր, թորումը տարվում է մինչև թնդուլթյան 40 %-ին հասնելը, որից հետո թորվածքը պղտորվում է (պոչային ֆրակցիա):

Բարձր մոլեկուլային սպիրտների, սիվոլիսային միացությունների և ֆոսֆոնոլի մեծ պարունակությունների պատճառով պոչային ֆրակցիան, որը կոնդենսացվում է թորման տեղակայանքի առաջին ջերմափոխանակչով, ունենում է պոչային ֆրակցիային հատուկ տիպի բնույթ: Պոչային թորվածքը, որը միջինը ունենում է 20% թնդություն, որոշակի քանակով կուտակվելուց հետո վերաթորվում է:

Կորիզավոր մրգերի խմորված զանգվածի կրկնակի թորված սպիրտի հիմնական թորվածքը (սիրտ) ունենում է 56-67% թնդություն:

**3.3.1. Ծիրանի խմորված զանգվածի թորման ընթացք և ֆրակցիաներ**

Արարատի «Աբրիկոս» ՍՊԸ-ում ծիրանի և դեղձի խմորված զանգվածները ենթարկվում են կրկնակի թորման

**Առաջնային թորում**

1. Ծարանտական ապարատ բարձվող  $T_1 = 5$  մ<sup>3</sup> ծավալով միջինը  $n_1 = 6,2$  ծավալային տոկոս սպիրտի պարունակությամբ խմորված զանգվածից միջինը  $n_2 = 22,5$  ծավալային տոկոս թնդությամբ ստացվող թորվածք՝

$$V_1 = \frac{T_1 \cdot n_1}{n_2} = \frac{5000 \cdot 6,2}{22,5} = 1378 \text{ L}$$

9. Թորման ընթացքում տեղի է ունենում թորվածքի կորուստ  $P_1 = 0,8$ %-ի չափով և ստացվող առաջնային թորվածքի ծավալը կազմում է՝

$$V_2 = \frac{V_1(100 - P_1)}{100} = \frac{1378(100 - 0,8)}{100} = 1367 \text{ L} = 307,5 \text{ L բացարձակ սպիրտ}$$

**Վերաթորում**

3. Շարան տակ ան ապարատ բարձրող  $T_2 = 5$  մ<sup>3</sup> ծավալ ու վ միջինը  $n_2 = 22,5$  ծավալային տոկոս թնդու թյամբ առաջնային թորվածքից միջինը  $n_3 = 58$  ծավալային տոկոս թնդու թյամբ թորվածք ստացվում է՝

$$V_2 = \frac{T_2 \cdot n_2}{n_3} = \frac{5000 \cdot 22,5}{58} = 1940 \text{ Լ}$$

4. Թորման ընթացքում տեղի ունեցող  $P_2 = 1,2$  % կորուստները հաշվի առած ստացվող վերաթորվածքի ծավալը կազմում է՝

$$V_3 = \frac{V_2(100 - P_2)}{100} = \frac{1940(100 - 1,2)}{100} = 1917 \text{ Լ} = 1111,8 \text{ Լ բացարձակ սպիրտ}$$

5. Առանց  $P_3 = 3$  % գլխային ֆրակցիաների վերաթորվածքը ըստ հաշվարկային բացարձակ սպիրտի կստացվի՝

$$V_4 = V_3 - \frac{V_3 \cdot P_3}{100} = 1111,8 - \frac{1111,8 \cdot 3}{100} = 1078,4 \text{ Լ}$$

6. Վերաթորելիս պոչային ֆրակցիան (40 ծավալային տոկոսից առավել ցածր թորվածք) միջինը կազմում է 7 ծավալային տոկոս, որի կեսը կրկնակի թորման պարագայում օգտագործելի է, փաստորեն պոչային ֆրակցիան կազմում է ընդհանուրի  $P_4 = 3,5$  %-ը և թորվածքը ըստ հաշվարկային բացարձակ սպիրտի կստացվի՝

$$V_5 = V_4 - \frac{V_4 \cdot P_4}{100} = 1078,4 - \frac{1078,4 \cdot 3,5}{100} = 1039,5 \text{ Լ}$$

Ծիրանի խմորված գանգվածի թորման համընդհանուր ցուցանիշները բերված են թիվ 7 աղյուսակում:

Թորման ընթացքի վերահսկման համար մեր կողմից ուսումնասիրվել է ըստ ժամանակահատվածների թորվածքի ելքերը և թնդու թյունները: Փորձնական աշխատանքների արդյունքում սահմանվել է առաջին և երկրորդ թորումների տևողությունները և կազմվել



տարբերակները, որը կարգավորվել է չոր հագեցած գոլորշու ճնշման փոփոխմամբ:

Աղյուսակ 7.

**Ճիրանի խմորված գանգվածի թորվածքի  
ցուցանիշներ**

№	Արգասիքները ստեխնունդի ակնարկող տեսքի	Ելանյութ		Կոռուստիվներ, %	Թորվածք		Ելքի քանակություն
		քանակ, լ	թնդ., %		թնդ., %	եկք, լ	
1.	Առաջին թորում	5000,0	6,2	0,8	22,5	1367,0	307,5
2.	Երկրորդ թորում	5000,0	22,5	1,2	58,0	1917,0	1111,8
3.	Երկրորդ թորման թորվածք առանց գլխային ֆրակցիայի	-	-	3,0	-	1859,0	1078,4
4.	Երկրորդ թորման թորվածք առանց գլխային և պոչային ֆրակցիաների	-	-	3,5	-	1792,0	1039,5

Քանի որ առաջին թորման ելանյութի թնդությունը ցածր է՝ (միջինը 6,2 %) և հագեցման ջերմաստիճանը բարձր ծարանտական ապարատի աշխտանքային փուլը տևական է 15-16 ժամ:

Ծարանտական 5 մ<sup>3</sup> ծավալով թորման ապարատում վերաթորման աշխտանքային և լրիվ փուլը կազմում է մինչև 14 ժամ: Թորման դինամիկան ուսումնասիրելու համար գլխային ֆրակցիայի հաշվարկային քանակի անջատումից հետո, ամեն 60 րոպե նմեկ անգամ որոշվել է թորվածքի քանակը և թնդությունը, գրանցվել հագեցման ջերմաստիճանները:

Ուսումնասիրման փորձնական տվյալների արդյունքները բերված են թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 8.

**ԳԼ խայ ի ն ֆրակցիայ ի անջատող միջոց հետո ծիրանի սպիրտահոլմքի թորման ընթացքի ցուցանիշները**

№	Փորձանման շերտ	Նմանաբան ժամ.	Թորվածք			Խտություն, գ/սմ <sup>3</sup>	Ճարակված ընդհանուր, %
			ճարակված, Լ	թեղի, %	հագեցման միջին ջերմաստիճանը, °C		
1.	I փորձանման շերտ	9 <sup>00</sup>	186,4	67,7	78,8	0,890	10,4
2.	II փորձանման շերտ	10 <sup>00</sup>	185,2	64,3	79,9	0,900	10,3
3.	III փորձանման շերտ	11 <sup>00</sup>	185,3	63,0	80,4	0,910	10,3
4.	IV փորձանման շերտ	12 <sup>00</sup>	184,9	59,8	81,3	0,914	10,3
5.	V փորձանման շերտ	13 <sup>00</sup>	182,5	59,3	81,3	0,915	10,2
6.	VI փորձանման շերտ	14 <sup>00</sup>	179,7	58,1	82,6	0,916	10,0
7.	VII փորձանման շերտ	15 <sup>00</sup>	175,0	58,1	82,9	0,916	9,8
8.	VIII փորձանման շերտ	16 <sup>00</sup>	173,4	52,3	83,7	0,926	9,7
9.	IX	17 <sup>00</sup>	170,7	49,6	84,0	0,929	9,6

	փորձանման ն Լ 2						
10.	X փորձանման ն Լ 2	18 <sup>00</sup>	167,3	44,5	84,8	0,938	9,4
	Ը ն դ ամ Ե ն ը	-	1790,4	57,9	-	-	100,0

**Լ ր ա գ ո ւ մ** - թորված քի ը ն դ հ ան ո ւ ր թ ն դ ո ւ թ յ ո ւ ն ը հ ա շ վ ար կ վ Ե Լ Ե մ ի ջ ի ն տո կ ո ս ա յ ի ն թ վ ի ք ան ա ձ ն ո վ և ը ն դ հ ան ո ւ ր թ ո Ր վ ա ծ ք ն Ե Ր ը խ ա ռ ն Ե Լ ո ւ ց հ Ե տո ար Ե ո մ Ե տ Ր ո վ :

Վ Ե Ր ա թ ո Ր մ ան պ Ր ո ց Ե ս ի վ Ե Ր ա հ ս կ մ ան հ ամ ար ո ւ ս ո ւ մ ն ա ս ի Ր վ Ե Լ Ե թ ո Ր վ ա ծ ք ն Ե Ր ի ս տ ա ց մ ան ջ Ե Ր մ ա ս տ ի ճ ան ա յ ի ն ը ն թ ա ց ք ը և տ ն ո ղ ո ւ թ յ ո ւ ն ը :

Խ մ ո Ր վ ա ծ գ ան գ վ ա ծ ի տ ա ք ա ց ո ւ մ ը մ ի ն չ և 63 °C ի Ր ա կ ան ա ց վ Ե Լ Ե ար ա գ ը ն թ ա ց կ ար գ ո վ , ո Ր ի ց հ Ե տո ս ա հ ո ւ ն կ Ե Ր պ ո վ ջ Ե Ր մ ա ս տ ի ճ ան ը հ ա ս ց վ Ե Լ Ե 66 °C-ի : Ս կ ս ա ծ 66 °C-ի ց չ կ ո ն դ Ե ն ս ա ց վ ո ղ մ ա ս ի գ ո Լ ո Ր շ ի ն Ե Ր ի ան ջ ա տ մ ան հ ա շ վ ի ն ի հ ա յ տ Ե գ ա Լ ի ս ս ի Ր տ ա յ ի ն հ ո տ , ո Ր ը վ կ ա յ ո ւ մ Ե գ ան գ վ ա ծ ի 65 °C...68 °C հ ա ս ա ծ Լ ի ն Ե Լ ո ւ մ ա ս ի ն :

Ջ Ե Ր մ ա ս տ ի ճ ան ը 68...72 °C հ ա ս ց ն Ե Լ ո ւ ց հ Ե տո ս կ ս վ ո ւ մ թ Ե թ և \$ Ր ա կ ց ի ան Ե Ր ի (մ Ե թ ի Լ ս ա ի Ր տ , ք ա ց ա խ ա Լ դ Ե հ ի դ , մ Ր ջ ն ա Ե թ ի Լ ա յ ի ն Ե թ Ե Ր , ք ա ց ա խ ա մ Ե թ ի Լ ա յ ի ն Ե թ Ե Ր ) գ ո Լ ո Ր շ ա ց ո ւ մ ը : Ա Ր ար ա տ ի «Ա Բ Ր ի կ ո ն » Ս Պ ը ն կ Ե Ր ո ւ թ յ ո ւ ն ո ւ մ գ Լ խ ա յ ի ն \$ Ր ա կ ց ի ա յ ի ան ջ ա տ ո ւ մ ը կ ա տ ար վ ո ւ մ Ե ո չ պ ա կ ա ս 1 ժ ա մ վ ա ը ն թ ա ց ք ո ւ մ , ջ Ե Ր մ ա ս տ ի ճ ան ը դ ան դ ա ղ ք ար ձ Ր ան ո ւ մ մ ի ն չ և 78 °C: 78 °C-ի ց ս կ ս վ ո ւ մ Ե հ ի մ ն ա կ ան թ ո Ր վ ա ծ ք ի ան ջ ա տ ո ւ մ ը , թ ո Ր մ ան ջ Ե Ր մ ա ս տ ի ճ ան ը գ ն ա Լ ո վ ք ար ձ Ր ան ո ւ մ Ե , թ ո Ր վ ա ծ ք ի ք ան ա կ ը պ ա կ ա ս ո ւ մ : Յ ի մ ն ա կ ան թ ո Ր վ ա ծ ք ի ան ջ ա տ Ե Լ ը

դադարեցվում է, երբ ջերմաստիճանը հասնում է 85°C-ի: Սկսած 85°C-ից թորվածքը պղտորվում է, ինչը թորվող սպիրտում դժվարալույծ սիվոլիտային յոլեթիմեծքանակի հետևանք է: 85 և ավելի բարձր ջերմաստիճաններում անջատված թորվածքում (պոչային ֆրակցիա), որոշ չափով էթիլ սպիրտ է պարունակվում, որը դժվար է անջատել, ինչի համար այն խառնվում է թորման հաջորդ խմբաքանակին և վերաթորվում:

Կատարված գիտափորձնական աշխատանքների արդյունքով հնարավոր է եզրակացնել՝

- ծիրանի խմորված գանգվածից հնարավոր է ստանալ բարձրորակ սպիրտահումք 56-67 ծավալային տոկոս թնդոլթյամբ,
- սպիրտահումքի պահանջվող որակը և թորման տևողությունը հնարավոր է կարգավորել թորման ջերմաստիճանի ընտրմամբ, ինչը իրականացվում է օձագալար խողովակներում չոր հագեցած գոլորշու ճնշման սահմանումներով,
- սպիրտի առավել բարձր պարունակությունամբ թորվածք ստացվում է թորման առաջին 5 ժամվա ընթացքում,
- թորվածքի 44,5 և ավելի պակաս մինչև 40 ծավալային տոկոս սպիրտայնությունամբ թորվածքի քանակը ընդհանուրի նկատմամբ կազմում է ընդամենը 9,4%, ինչը թորման ճիշտ ռեժիմների ընտրման հետևանք է,
- թորման սկզբնական փուլում գլխային ֆրակցիայի (ընդհանուր 58 լ.) անջատումը իրականացվում է հնարավորինս դանդաղ, որի շնորհիվ անջատվում մեթիլ սպիրտի հիմնական մասը:

### 3.4. Կորիզավորմրգերի քացախ

Պահածոներին և տարբեր տեսակի սննդամթերքներին արտադրությունը և ներուժ քացախն օգտագործվում է թե որպես պահածոյող նյութ, որը միաժամանակ համային հավելանյութ է, և թե որպես տեխնոլոգիական ազդակ:

ԱՄՆ-ում բուսական և կենդանական ծագման հումքատեսակներից ամենատարբեր տեսակի մթերքներին արտադրությունը և ներուժ կատարվում է թթվեցում, որի համար հաճախ օգտագործվում է քացախաթթու կամ որովելիցանկալի է` քացախ [124]:

Մրգահատապտղային հումքից ստացվող քացախներն առանձնանում են իրենց համային արժանիքներով և ամեն կոնկրետ դեպքում պահանջվում է օգտագործել որոշակի հումքատեսակից ստացվող քացախ:

Արտադրական ծավալներով ՀՀ-ում խաղողից և խնձորից քացախներին արտադրման տեխնոլոգիաները մշակված և արտադրվում են, իսկ կորիզավոր պտուղներին` ոչ:

Ավելին` կորիզավոր պտուղներին արժեքավոր քացախներին պատրաստում ընդունված չեն ևս ՀՀ ազգաբնակչության կենցաղում:

Քացախներին օգտագործումը թունդալկոհողային ըմպելիքներին որակական ցուցանիշների բարելավման համար հայտնի և ընդունված տեխնոլոգիա է: [137] Մրգահատապտղային թունդալկոհողային ըմպելիքներում ցանկալի է օգտագործել այնպիսի քացախներ, որոնք չեն խաթարի ըմպելիքի բնորոշ բույրը, առավել` այն կդարձնեն առավել ցայտուն: Նշվածով պայմանավորված մեր կողմից փորձարկվել է մշակել կորիզավոր մրգերի քացախներին արտադրման

տեխնոլոգիա, ստանալ ծիրանի, դեղձի և սալորի քացախներ, տալ դրանց որակական գնահատականը: [117]

Ընտրվել է ծիրանի «Երևանյան» սորտ, դեղձի «Նարնջի» սորտ, սալորի «Ռենկլոդ Ալտանի» սորտ:

Փորձնական աշխատանքներ իրականացնելու համար յուրաքանչյուր հոլմքատեսակից վերցվել է 30-ական կգ պտուղ, և վացվել, ջարդվել ատամնավոր գրտնակային ջարդիչով, անջատվել կորիզները: Քանի որ կորիզավորները դժվարությամբ են ենթարկվում մամլման, իրականացվել է ջարդված զանգվածի մշակում երկու տարբերակով: Առաջին տարբերակով զանգվածի պեկտինային նյութերի հիդրոլիզի համար ենթարկվել են ֆերմենտացիայի: Այդ նպատակով առանձնացվել է 10-ական կգ տրորված զանգվածի երկու խմբաքանակ, որոնցից մեկին ավելացվել է պեկտինլիազա ֆերմենտային կիսապատրաստուկ:

Ֆերմենտային կիսապատրաստուկ ստանալու համար կանխավ 1 կգ զանգվածի հաշվով 0,2 գ ֆերմենտին ավելացվել է 10 գ պտղահյութ, ջերմաստիճանը հասցվել 45 °C-ի պահվել 40...45 °C-ի միջակայքում 2 ժտևողությամբ:

Ֆերմենտային պատրաստուկն ավելացվել է զանգվածին, պահպանվել 30 ր 40...45 °C-ում և տրվել խմորման:

Երկրորդ տարբերակով 10 կգ զանգվածը տրվել է խմորման առանց ֆերմենտային մշակման:

Խմորման ինտենսիվ ընթացք ապահովելու համար կանխավ անջատված պտղահյութերին 1 Լ-ի հաշվով ավելացվել է 50 գրամ Angel ապրանքանիշի BV-818 տեսակի խմորասուունկ, պահվել 35...38 °C-ում 2 ժամ, և ինտենսիվ խմորվող հյութից 1-ական կգ ավելացվել նախապատրաստված զանգվածներին:

Խմորման ընթացքը վերահսկվել է ջերմաստիճանը 22...27 °C-ի միջակայքում պահպանելով:

Սպիրտային խմորման 3-րդ օրը, խմբաքանակների գանգվածները ենթարկվել են հյուսվածքային, կտավով քամելով կոշտ մնացորդը մամլվել է Լաբորատոր մամլիչով, հյուսվածքը խառնվել է առաջնային հյուսվածքին, սկզբից լցվել է փայտյա տակառների մեջ, այնուհետև ապակյա տարաներ:

Սպիրտային խմորման ավարտից հետո քացախաթթվային խմորման նպատակով խմորված հյուսվածքին ավելացվել է *Acetobacter aceti*, որը ունակ է օքսիդացման ճանապարհով սպիրտը վերափոխել ու քացախաթթվի: Քացախաթթվային խմորումը տարվել է 22...27 °C-ի սահմաններում: խմորման 20-րդ օրը նստվածք առաջանալուց հետո սիֆոնի օգնությամբ հեղուկ մասը ենթարկվել է դեկանտացիայի, լցվել հերմետիկ փակվող մաքուր, չոր ապակյա տարաների մեջ և որակի բարելավման համար (հնեցում) պահպանվել 2ամիս տևողությամբ:

Մաքուր թափանցիկ քացախ ստանալու համար հնեցումից հետո իրականացվել է քացախի պարզեցում և ֆիլտրացիա:

Պարզեցման համար պատրաստվել է բենտոնիտի 5%-ոց սուսպենզիա և ամեն 1լ քացախին ավելացվել 15մլ-ի չափով, խառնվել, նստվածք առաջանալուց հետո դեկանտվել:

Պարզեցված քացախը ջրավակումային պոմպի օգնությամբ ֆիլտրվել է Բյուսների ձագարով, Բուկենի կոլբայի մեջ: Ֆիլտրման համար օգտագործվել է 30 մկմ թողունակությամբ ֆիլտրի թուղթ:

Փորձնական աշխատանքների արդյունքում ստացված տվյալները բերված են թիվ 9 աղյուսակում:

Աղյուսակ 9

**Ծիրանից, դեղձից և սալորից քացախների ստացման տեխնոլոգիական ցուցանիշներ**

N	Ցուցանիշներ	Չափ	Ծիրան	Դեղձ	Սալոր
---	-------------	-----	-------	------	-------

	ր	ի միա վոր	անմ շակ	\$ Երմեն տաց .	ան մշ	\$ Երմ ենտ	անմ շ .	\$ Երմ ենտ
1.	Ելանյուրթի զանգված	կգ	30		30		30	
2.	Խմորման ենթակա զանգված	կգ	26,4		25,8		25,3	
3.	Խմորման համար ստացված զանգված Ելանյուրթի նկատմամբ	%	88,0		86,0		84,3	
4.	Լուծելիչոր նյութեր	%	13,9		12,2		14,7	
5.	Ընդհանուր շաքար	%	10,9		9,6		11,4	
6.	Պեկտինային նյութեր	%	0,72		0,66		0,91	

աղյուսակ 9-ի շարունակություն

7.	Խմորված քաղցու (մամլումից հետո)	լ	8,9	9,1	9,1	9,3	8,6	8,9
8.	Խմորված քաղցուի սպիրտայնու թյուն	%	5,3	5,4	4,8	4,8	5,8	6,0
9.	Անջուր սպիրտ	լ	0,472	0,491	0,437	0,447	0,499	0,534
10.	Քացախի քանակը առանց նստվածքի	%	8,4	8,8	8,5	8,6	8,2	8,5
11.	Քացախաթթու	%	5,2	5,3	4,6	4,7	5,7	5,8
12.	Անջուր քացախաթթու	կգ	0,459	0,480	0,410	0,424	0,490	0,518



**L րաց ու մ:** Բ ու լ ո ղ ո ղ տարբերակներում խմորման է ենթարկվել 10-ական դմ<sup>3</sup> նախապատրաստված հ ու մ ք , ո ղ ո ն ց զ ա ն գ վ ա ծ ն ե ղ ղ կ ա գ մ ե լ ե ն ՝ ծ ի ր ա ն - 10,55կգ , դ ե ղ ձ - 10,49կգ և ս ա լ ո ղ 10,58կգ :

Ա ն ջ ու ղ ք ա ց ա խ ա թ թ վ ի զ ա ն գ վ ա ծ ղ հ ա շ վ ա ր կ վ ե լ է ղ ս տ 100%-ո ց ք ա ց ա խ ա թ թ վ ի խ տ ու թ յ ա ն (1,05գ /ս մ<sup>3</sup>):

Տ ե ս ա կ ա ն ո ղ ե ն շ ա ք ա ղ ի մ ե կ մ ի ա վ ո ղ ի խ մ ո ղ ու մ ի ց պ ե տ ք է առաջանա 0,55 մ ի ա վ ո ղ ս պ ի ղ տ , առավել հաճախ ս պ ի ղ տ ի ե լ ք ղ կ ա գ մ ու մ է 0,5մ ի ա վ ո ղ , ի ս կ ս պ ի ղ տ ի 1գ -ի ց ք ա ց ա խ ա թ թ վ ի ե լ ք ղ պ ե տ ք է կ ա գ մ ի 1,304գ : Պ ա կ տ ի կ ո ղ ե ն 1 մ լ (0,7938 գ ) ս պ ի ղ տ ի ց ս տ ա ց վ ու մ է ո չ թ ե 1,035 գ , ա յ լ 1 գ ք ա ց ա խ ա թ թ ու կ ա մ ո ղ մ ի ն ն ու յ ն ն է 1 գ ս պ ի ղ տ ի ց ս տ ա ց վ ու մ է 1,26գ ք ա ց ա խ ա թ թ ու : [48]

Ս տ ա ց վ ա ծ ք ա ց ա խ ն ե ղ ղ ենթարկվել են ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն հ ա մ տ ե ս ի , ա ղ ձ ա ն ա գ ղ վ ե լ դ ղ ա ն ց բ ու յ ղ ա յ ի ն տ ի պ ի կ ու թ յ ու ն ղ ե լ ա ն յ ու թ ե ղ ի ն :

Ի ղ ա կ ա ն ա ց վ ա ծ գ ի տ ա փ ո ղ ձ ն ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ի ա ղ յ ու ն ք ն ե ղ ո վ հ ն ա ղ ա վ ո ղ է ե գ ղ ա կ ա ց ն ե լ :

- Պ տ ղ ի մ ի ա վ ո ղ ի ց առավել մեծ քանակի տրորված զ ա ն գ վ ա ծ ս տ ա ց վ ու մ է ծ ի ր ա ն ի ց ,
- Ֆ ե ղ մ ե ն տ ա ց ի ա յ ի ա ղ յ ու ն ք ու մ բ ու լ ո ղ հ ու մ ք ա տ ե ս ա կ ն ե ղ ի հ յ ու թ ե ղ ի ե լ ք ղ մ ե ծ ա ն ու մ է ,
- հ ու մ ք ա տ ե ս ա կ ն ե ղ ի ս պ ի ղ տ ա յ ի ն , ա յ ն ու հ ե տ ն ք ա ց ա խ ա թ թ վ ա յ ի ն խ մ ո ղ ու մ ա ն ա ղ յ ու ն ք ն ե ղ ղ լ ի ո վ ի ն պ ա յ մ ա ն ա վ ո ղ վ ա ծ ե ն դ ղ ա ն ց ու մ շ ա ք ա ղ ն ե ղ ի պ ա ղ ու ն ա կ ու թ յ ա մ բ ,
- ք ա ց ա խ ի բ ա ղ ղ թ ն դ ու թ յ ու ն և ք ա ց ա խ ա թ թ վ ի առավել մեծ ելք ստացվում է ս ա լ ո ղ ի ց :

### **3.5. Դ ե ղ ձ ի բ ու ղ ա վ ե տ ս պ ի ղ տ**

Դ ե ղ ձ ի օ ղ ու ն և բ ղ ե ն դ ա ի ի ն ց ա յ տ ու ն ա ղ տ ա հ ա յ տ վ ո ղ տ ի պ ի կ հ ա մ հ ա ղ ո ղ դ ե լ ու հ ա մ ա ղ , մ ե ղ կ ո ղ մ ի ց փ ո ղ ձ ա ղ կ վ ե լ և մ շ ա կ վ ե լ է դ ե ղ ձ ի բ ու ղ ա վ ե տ ս պ ի ղ տ ի ս տ ա ց մ ա ն տ ե խ ն ու ղ ո գ ի ա յ ի տ ա ղ բ ե ղ ա կ ն ե ղ :

Յայտնի է, որ բուրավետ ալկոհոլային ընպեղիքների շատ տեսականիներ արտադրելիս օգտագործվում են դառը նուշի պտուղներ:

Դեղձենու պտուղները ունեն բնորոշ բույր և տիրապետում են \$ուկոնգիդային ունակութունների:

Նշվածները հիմք հանդիսացան դեղձի բուրավետ սպիրտ ստանալու համար, բացի պտուղներից օգտագործել նաև դեղձի կորիզների միջուկ և դեղձենու տերևներ:

Փորձարկումները տարվել են խմորվող զանգվածին հավելանյութերի ավելացման 5 տարբերակներով.

1. Դեղձի նարինջի սորտի խյուսի 10 Լ խմորվող զանգված է ներմուծվել 1 կգ հաճելի բնորոշ բույրով աչքի ընկնող դեղձի «Յասմիկ» սորտի պտուղների խյուս:
2. Դեղձի նարինջի սորտի պտուղների խյուսի խմորվող 10 Լ զանգված է ներմուծվել 10 գ դեղձի կորիզի միջուկի ջարդված զանգված:
3. Դեղձի նարինջի սորտի պտուղների խյուսի խմորվող զանգվածին ավելացվել է 0,3 կգ դեղձենու տերևներ:
4. Ինչպես առաջին տարբերակում խմորվող զանգվածին, դեղձի «Յասմիկ» սորտի պտուղներից զատ ավելացվել է 10 գ դեղձի կորիզի ջարդված միջուկ:
5. 10 Լ խմորվող զանգվածին ավելացվել է 1 կգ դեղձի «Յասմիկ» սորտի պտուղների խյուս, 10 գ դեղձի կորիզի ջարդված միջուկ և 0,3 կգ դեղձենու տերևներ:

Նշված բոլոր տարբերակները ինչպես և ստուգիչը (դեղձի նարինջի սորտի պտուղների

խյ ու ս), խմորման ընթացքում պարբերաբար խառնվել են և խմորման ավարտից հետո թորվել :

Թորումը իրականացվել է ձևափոխված բժշկական ավտոկլավով :

Բոլոր տարբերակների և ստուգիչի թորվածքները ենթարկվել են կրկնակի թորման և թորվածքների փորձանմուշներ պատրաստվել միևնույն 48° թնդուլթյամբ : Ստացված թորվածքների որակական գնահատման համար, որոշվել է արտաքին տեսքը, գույնը, համը, բույրը, կայունությունը և համի շեմքը :

Հոտի որոշման համար ֆիլտրե թղթի ժապավենները ընկղմվել են թորվածքների մեջ, թողնվել օդում կախված վիճակով 10ր տևողությամբ, կատարվել որոշումներ : Համի շեմքը որոշելու համար վերցվել է 50-ական մլ թորվածքներ և թորած ջրով նոսրացնելով գնահատվել նշելով ստացված լուծույթի թնդուլթյունը :

Ստացված բուրավետ սպիրտների բնութագրական տվյալները բերված են թիվ 10 աղյուսակում :

**Դեղձի բուրավետության փորձի քննության արդյունքներ**

Տարբերակներ	Գոյն	Արտաքին տեսք	Բույր	Համ	Համի շեմք, սպիրտայնությունը, %	Կայունություն
Ստուգիչ	անգույն	թափանցիկ առանց նստվածքի	դեղձի թուփարտահայտված	դեղձի թուփարտահայտված	27	Հատկանիշները մինչև 1 տարի պահպանելիս անփոփոխ
№ 1	անգույն	թափանցիկ առանց նստվածքի	դեղձի նբնորոշ	դեղձի նբնորոշ	24	Հատկանիշները մինչև 1 տարի պահպանելիս անփոփոխ
№ 2	անգույն	թափանցիկ առանց նստվածքի	դեղձի ցայտուն արտահայտված	դեղձի հագեցած	11	Հատկանիշները մինչև 1 տարի պահպանելիս անփոփոխ
№ 3	անգույն	թափանցիկ առանց նստվածքի	դեղձի, յուրահատուկ	դեղձի նբնորոշ, յուրահատուկ	22	Հատկանիշները մինչև 1 տարի պահպանելիս անփոփոխ
№ 4	անգույն	թափանցիկ առանց նստվածքի	դեղձի հագեցած	դեղձի նբնորոշ հագեցած	9	Հատկանիշները մինչև 1 տարի պահպանելիս անփոփոխ

№ 5	անգ ՆԼԵ Ն	Թափանց իկ առանց նստված քի	դեղձի, յոլրահատ ՆԼԵ հագեցած	դեղձին բնորոշ, յոլրահատՆԼԵ հագեցած	9	Հատկանիշներ ըմինչև 1տարի պահպանելիս անփոփոխ
-----	-----------------	---------------------------------------	--------------------------------------	---	---	--

Կատարված գիտափորձարարական աշխատանքի արդյունքներով հնարավոր է եզրակացնել՝

- ստուգիչի համեմատությամբ փորձարկված բոլոր տարբերակների մոտ համընթաց առավել արտահայտված են, համի շեմքը սպիրտի առավել պակաս պարունակությունների սահմաններում,
- դեղձի տերևի ներմուծման տարբերակներում, փորձանմուշները ձեռք են բերում յուրահատուկ համ և բույր և կարող են օգտագործվել տարբեր սննդամթերքների արտադրությունում,
- դեղձին առավել բնորոշ և ցայտուն արտահայտված բուրավետ սպիրտներ ստացվում են դեղձի «Յասմիկ» սորտի պտուղների և դեղձի կորիզի ջարդված միջուկի ներմուծման պարագայում,
- դեղձի «Նարինջի» սորտի խմորված զանգվածի թորվածքում հավելանյութերը թրմելով և թորելով, ստացվում են բույրով և համով առավել արտահայտված բուրավետ սպիրտներ:

Մեր կողմից փորձարկվել է դեղձի բուրավետ սպիրտի կիրառմամբ շոկոլադապատ կոնֆետներ ստանալու տարբերակներ: Կոնֆետներում որպես իրան ընտրվել է հունական կանաչ ընկույզի մուրաբայի կիսած, մասնակիորեն չորացրած պտուղներ, նախապատրաստված ընկույզի պտուղները ընկղմվել են դեղձի բուրավետ սպիրտի մեջ, պահվել մինչև 5 րլցնովի ֆունկցիոնալ նշանակություն ունեցող կտավատի քոլսպով պատրաստված լցոնով և շոկոլադապատվել:

### **3.6. Ծիրանի խմորված զանգվածի թորվածքի որակի բարելավման ուղիներ**

Սննդի անվտանգության ծառայությունների կողմից մեթիլ սպիրտի (CH<sub>3</sub>OH) սահմանային չափաբաժիններով մրգօղիների արտադրումը յուրաքանչյուր առանձին դեպքում պահանջում է խնդրի ներման ստեղծագործման տեսքով:

Կորիզավոր մրգատեսակների խմորման արգասիքներով մեթիլ սպիրտի պարունակությունը \$երմենտների ազդեցությամբ մրգերի պեկտինային նյութերի քայքայման հետևանք է: Պեկտինային նյութերը, որոնք բաղկացած են գալակտոլոնային, կարբոնային թթուներից և մեթիլ խմբի մասնիկներից՝ պեկտին էսթերազ, պեկտինազ, պեկտինգալակտոլոզա և այլ \$երմենտների ազդեցությամբ անջատում են մեթիլ խումբ, որը հիդրոլիզվելով վերածվում է մեթիլ սպիրտի: Պեկտին-լիազա և որոշ այլ \$երմենտների ազդեցությամբ պեկտինի պոլիմերային մոլեկուլից անջատվում են մոնոմերներ՝ առանց մեթիլ սպիրտի առաջացման: [115,124,132,136]

Փաստորեն, մեթիլ սպիրտի առավել պակաս պարունակությամբ մրգօղիների արտադրության խմորման պրոցեսը պետք է տանել պեկտին էսթերազ, պեկտինազ և պեկտինգալակտոլոզա \$երմենտների ակտիվությունը, ճնշելով պեկտին-լիազա \$երմենտի ակտիվումը: Ակնհայտ է, որ ավագոյն տարբերակը թեմեկի և թեմյուլ սիմիաժամանակի րականացումն է:

Ինհիբիտորների տեսակների ընտրությունը սահմանափակվում է՝ պայմանավորված պահանջներով, որ վերջինները չպետք է առաջացնեն ըմպելիքի քիմիական կազմի անցանկալի փոփոխություններ և փչացնեն օրգանոլեպտիկ հատկությունները: Տարբեր հեղինակների կողմից,

որպես \$երմենտների ինհիբիտորներ թվում են հետևյալ նյութերը. ծանր մետաղների աղեր, պիրոֆոսֆորաթթու և կապտաթթու, ինչպես նաև դրանց աղերը, քլորը, բրոմը, յոդը, նատրիումի \$տորիդը, օրգանական հիմքերը, տանինները և այլն [79,132]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սննդում այդ նյութերի մեծ մասի կիրառումը բացառվում է, խնդրի լուծման համար մեր կողմից փորձարկվել է խմորման ընթացքի և խմորված զանգվածում մեթանոլի պարունակության վրա օրտոֆոսֆորային թթվի (E338 սննդային հավելում) և տանինների ազդեցության ուսումնասիրումը [132,136]:

Ակնհայտ է, որ կաթնասուններն օգտագործելով պեկտինային նյութերով հարուստ սնունդ, իսկ ելնելով այն հանգամանքից, որ ստամոքսի պայմանները պեկտինների հիդրոլիզի համար խիստ նպաստավոր են՝ մեթիլսպիրտից չենթուկավորվում: Ինչով պայմանավորված, մեր կողմից փորձարկվել է նաև խմորվող զանգված ստամոքսահյուսվածքի բժշկական պրեպարատի և խմորման ընթացքի վրա դրանց ազդեցության ուսումնասիրումը:

Ռուսաստանի դաշնության Բերդսկ քաղաքի «Սիբբիոֆարմ» ընկերությունից ձեռք է բերվել մի քանի տեսակի նոր և դեռևս չսերտիֆիկացված \$երմենտներ. մասնավորապես «Ամիլոսուլֆոլին» և «Մացերոբացիլին» ամիլոլիտիկ \$երմենտային պատրաստուկներ:

Մեր կողմից իրականացվել է ծիրանի «Երևանյան» սորտի յոթ խմբաքանակի տեխնոլոգիական մշակում, խմորում, թորում, թորվածքի ուսումնասիրություն և համտես: Բոլոր մշակումները տարվել են նույն խմբաքանակի ծիրանի տրորված զանգվածներում



«Oenoferm Freddo F3» տեսակի խմորասնկերով նույնատիպ խմորման պահամաններում և նույն ջերմային ռեժիմով: Բերքահավաքից հետո պտուղների ընդհանուր խմբաքանակը տրորվել է, կորիզները անջատվել, տրորված զանգվածում որոշվել է լուծելի չոր նյութերի և շաքարների պարունակությունները, որոնք համապատասխանաբար կազմել են 14,1% և 105 գ/դմ<sup>3</sup>: Տրորված զանգվածը բաժանվել է հավասար մասերի (20կգ) և ենթարկվել խմորման 7 տարբերակներով:

Խմորման ավարտից հետո իրականացվել է միևնույն ռեժիմներով ամբողջական թորում: Առաջին թորվածքում որոշվել է թնդությունը և մեթիլ սպիրտի պարունակությունը: Համտեսի համար այդ նմուշներից կատարվել է կրկնակի թորում՝ գլխային և պոչային \$րակցիաների առանձնացումով: Փորձերի տարբերակների նկարագրությունները բերված են թիվ 11 և թիվ 12 աղյուսակներում:

Համեմատելի տվյալներ ստանալու համար բոլոր տարբերակների երկրորդ թորումը կատարվել է մինչև միևնույն ծավալի թորվածքի ստացվելը:

Աղյուսակ 11

**Կատարված փորձերի տարբերակներ**

Ծիրանի խյուսի խմբաքանակ ների տարբերակ ներ	Մշակման եղանակ
Տարբերակ 1	Ստուգիչ տարբերակ

Տարբերակ 2	20լ հտր գանգվածին խմորոլմից առաջ ներարկվել է 4գ. պեկտին և լիպաֆերմենտ
Տարբերակ 3	20լ հտր գանգվածին խմորոլմից առաջ ներարկվել է 100 գր. Օրտոֆոսֆորային թթու
Տարբերակ 4	20լ հտր գանգվածին խմորոլմից առաջ ներարկվել է 80 գր. Կաղնե փայտի տանին
Տարբերակ 5	20լ հտր գանգվածին խմորոլմից առաջ ներարկվել է 80 գր. Ստամոքսահյուսի պատրաստուկ «Էկվին»
Տարբերակ 6	20լ հտր գանգվածին խմորոլմից առաջ ներարկվել է 20 գր. «Ամիլոսոլֆոսֆին» ֆերմենտային պրեպարատ
Տարբերակ 7	20լ հտր գանգվածին խմորոլմից առաջ ներարկվել է 20 գր. «Մացերոբացիլին» ֆերմենտային պրեպարատ


Աղյուսակ 12

**Ծիրանի տրորված և խմորված գանգվածի  
թորվածքների ցուցանիշներ**

Ծիրանի խմբաքանակ	Առաջին թորվածքի թնդոլ թյուլն, %	Երկրորդ թորվածքի թնդոլ թյուլն, %	Մեթիլ սպիրտի պարունակո լթյուլնը, լիտր	Համտեսի գնահատական 10 բալանոց սանդղակով
Տարբերակ 1	16,8	55,2	3,0	8,0
Տարբերակ 2	18,0	58,2	1,2	9,0
Տարբերակ 3	16,0	56,0	2,5	6,0
Տարբերակ 4	17,3	59,0	0,2	2,0
Տարբերակ 5	16,9	58,8	1,8	10,0
Տարբերակ 6	17,5	61,2	2,4	4,0
Տարբերակ 7	17,7	60,8	2,9	7,0

Խմորման արգասիքների ցուցադրման համար կազմվել է համտեսային գնահատման և մեթիլ սպիրտի պարունակության սխեման:

Թորվածքների դեգուստացիոն գնահատականի և մեթիլ սպիրտի պարունակության ցուցանիշներ:



Սխեմա.2.Թորվածքների համտեսային գնահատման և մեթիլ սպիրտի պարունակության գծապատկեր

### Եզրակացություն.

Կատարված գիտափորձարարական աշխատանքների արդյունքներով հնարավոր է եզրակացնել`  
 - Խմորման ընթացքում պեկտին-լիազա ֆերմենտի օգտագործումը թորվածքում իջեցնում է մեթանոլի քանակները: Ստացվում է որակապես ստուգահիշի ն գերազանցող մթերք,

- օրտոֆոսֆորային թթու և խմորման զանգվածում թույլ չի տալիս մեթիլ սպիրտի մեծ քանակների առաջացում, սակայն օրգանոլետիկ ցուցանիշներով ստացված սպիրտը հսկիչ տարբերակից գրեթե չի տարբերվում,
- կաղնե փայտի տանինը խմորման ընթացքում կանխում է մեթիլ սպիրտի առաջացումը, սակայն ստացված սպիրտը օժտված է լինում շատ վատ օրգանոլետիկ հատկություններով,
- ստամոքսահյուսվածքում մշակման դեպքում խմորվող զանգվածում մեթանոլի ելքը մոտավորապես 40% ով կրճատվում է, իսկ համտեսային ցուցանիշներով ստացված սպիրտի որակը մնացածներին գերազանցում,
- Ամիլոսուլոսի և Մացերոբացիլին ֆերմենտային պրեպարատներով մշակելիս, խմորվող զանգվածում մեթիլ սպիրտի քանակները աննշան կրճատվում են, սակայն համտեսային տվյալները ստացվում են բավականին ցածր:

**3.7. Դեղձի խմորված զանգվածի թորվածքի որակի բարելավման ուղիներ**

Ելնելով սննդի անվտանգության համաշխարհային ծառայությունների կողմից ալկոհոլային ըմպելիքներում մեթիլ սպիրտի պարունակության սահմանափակման 1 և անջուր սպիրտի հաշվով ոչ ավել քան 2գ, պահանջից՝ պահանջ, որի լուծումը հատկապես պարտադիր է կորիզավորմրգերից թուևդ ալկոհոլային ըմպելիքներ արտադրելիս, կարևորվում է խնդրի լուծման տարբերակների բացահայտումը:

Մեր կողմից 2009 - 2017 թ-ի ընթացքում իրականացվել է դեղձի «Նարնջի» սորտի ութ խմբաքանակների նախնական տեսնոլոգիական մշակում, խմորում, թորում, թորվածքում էթիլ սպիրտի, մեթիլ սպիրտի քանակական որոշումներ և համտես:

Փորձնական աշխատանքների իրականացման համար վերցվել է 92-98 գ/դմ<sup>3</sup> շաքարի պարունակությամբ դեղձի 20-ական լիտր տրորված գանգվածի 12 տարբերակ, խմորման ենթարկվել «Oenofem Freddo F3» տեսակի խմորասնկերի միջոցով, նույնատիպ տարողություններում 22 ... 25 °C ջերմաստիճանային պայմաններում:

Խմորման ավարտից հետո իրականացվել է խմորված գանգվածի առաջնային թորում, թորվածքներում որոշվել թնդությունը և մեթիլ սպիրտի պարունակությունը: Որակի գնահատման համար կատարվել է կրկնակի թորում, անջատվել գլխային և պոչային ֆրակցիաները, գնահատվել համտեսի 10բալանոց համակարգով:



Գիտափորձերի տարբերակները, առաջնային թորվածքում մեթիլ սպիրտի պարունակությունը, կրկնակի թորվածքում համտեսային գնահատականը բերված են թիվ 13 աղյուսակում և 1-7 դիագրամմաներում:

Աղյուսակ 13.



**Փորձնական տարբերակներ**

Դեղձի խյուսի խմբաքանակների տարբերակներ	Մշակման եղանակ
Տարբերակ 1	Ստուգիչ տարբերակ
Տարբերակ 2	20լիտր գանգվածում խմորումից առաջ ներմուծվել է 80գ.էկվին ստամոքսահյութի պատրաստուկ


Տարբերակ 3	20լ ի տր գ ան գ վ ա ծ ու մ խ մ ո թ ու մ ի ց առ ա ջ ն եր մ ու ծ վ ե լ է 0,2և 2,0գ «Պեպսին Կ» պատրաստուկ
Տարբերակ 4	20լ ի տր գ ան գ վ ա ծ ու մ խ մ ո թ ու մ ի ց առ ա ջ ն եր մ ու ծ վ ե լ է 10,0և 100,0գր . Կաղնե փայտի տանի ն
Տարբերակ 5	20լ ի տր գ ան գ վ ա ծ ու մ խ մ ո թ ու մ ի ց առ ա ջ ն եր մ ու ծ վ ե լ է 80գր . Օրտոֆոսֆորաթթվի - $H_4P_2O_7$ (E-338 հավելանյութ)
Տարբերակ 6	20լ ի տր գ ան գ վ ա ծ ու մ խ մ ո թ ու մ ի ց առ ա ջ ն եր մ ու ծ վ ե լ է 1,0և 10,0գ մացերոբացիլին
Տարբերակ 7	20լ ի տր գ ան գ վ ա ծ ու մ խ մ ո թ ու մ ի ց առ ա ջ ն եր մ ու ծ վ ե լ է 2,0և 20,0գր . ամիլոսուլբտիլին
Տարբերակ 8	20լ ի տր գ ան գ վ ա ծ ու մ թ ո թ ու մ ի ց առ ա ջ ն եր մ ու ծ վ ե լ է 20,0և 40,0մլ . սալորի քացախ




**Դիագր. 1. «Էրուին» - ստամոքսի հյուսք» պատրաստուկով դեղձի խյուսի խմորման և համոտեսի ցուցանիշներ**



**Դիագր. 2. «Պեպսին Կ» պրեպարատով դեղձի խյուսի խմորում:**




**Դիագր. 3. Կաղնե փայտի տանիքով դեղձի խյուսի խմորման և համոտեսի ցուցանիշներ:**




**Դիագր. 4. Օրտոֆոսֆորաթթվի– $H_4P_2O_7$  (E-338 հավելանյութ) ավելացումով դեղձի խյուսի խմորման և համոտեսի ցուցանիշներ:**






**Դիագր. 5. Մացերորացիլիկ ալելացրանով դեղծի խյրահ խմորման և համոտեսի ցուցակիչներ:**



**Դիագր. 6. Ամիլոսուբոտիլիկ ալելացրանով դեղծի խյրահ խմորման և համոտեսի ցուցակիչներ:**



**Դիագր. 7. Սալորի քացախի ավալացումով դեղձի խյուսի խմորման և համոտեսի ցուցանիշներ**

**Լ ր ա գ ու լ մ `**

- հավելանյութի ավելացվող քանակների համարելակետային տվյալներ են հանդիսացել նախնական փորձարկումների արդյունքները,
- սալորի քացախի ընտրությունը պայմանավորված է դեղձի և ծիրանի քացախների համեմատառավելլավ համտեսային ցուցանիշներով,
- մեթանոլի պարունակությունները (գ) բերված են 1լ անջուր սպիրտում պարունակության հաշվով:
- համեմատելի տվյալներ ստանալու համար ստուգիչ տարբերակի գնահատականը ընդունվել է հավասար 10միավորի:

Ստացված արդյունքները վկայում են, որ տարբեր հավելանյութերի ավելացմամբ դեղձի խյուսի խմորված գանգվածների առաջնային թորման արգասիքներում, մեթանոլի պարունակությունները, ստուգիչ տարբերակի համեմատ հիմնականում պակասում են, սակայն այդ ցուցանիշների բաղդատումը համտեսային

գնահատականները հետ, բացահայտում են որոշակի օգտագործման սահմանափակման կամ բացառման անհրաժեշտությունը:

Գիտափորձնական աշխատանքների ստացված արդյունքներով հաստատվեց, որ լավագույն տարբերակ է դեղձի խյուսի խմորումը կատարել 40գ-ի չափով սալորի քաղախավելացնելով:

### **3.8. Ծիրանի սպիրտի մշակումը ամերիկյան քոլոբոնների տեխնոլոգիայով**

Ծիրանից արտադրվող թունդ ալկոհոլային ըմպելիքների ընդունված տեսականիներն են. օղիները, բրենդիները և լիկյորները, որոնց արտադրման համար իրականացվում է սպիրտի ստացում և դրա հետագա տեխնոլոգիական մշակումներ:

ԱՄՆ-ում որոշ թունդ ալկոհոլային ըմպելիքների արտադրման համար Թենեսսիի մեթոդով իրականացվում է տեխնոլոգիական պրոցեսներ, որոնց ընդհանրությունը անվանվում է «Լինքոլնի պրոցես»: Եղանակի էությունը կայանում է նրանում, որ տարբեր հումքատեսակներից՝ հատկապես եգիպտացորենից ստացված սպիրտները, ֆիլտրվում են թխկիի ածուխի երեք մետրանոց շերտով, այնուհետև հնեցվում կաղնու տակառներում: Մեթոդի կիրառման շնորհիվ ազրեսիվ համով օժտված եգիպտացորենի սպիրտը ստանում է քաղցր բուրմունք և յուրահատուկ հաճելի փափուկ համ [63]:

Թխկի (Acer) - Sapindaceae ընտանիքի նպատկանոց 10-40մ. Բարձրությունը ծառ է, տարածված մոլորակի հյուսիսային կիսագնդում: Թխկու գարնանային

հյուսիսային շրջանում 3-4% շաքարներ: Հյուսիս-արևելքում գոյություն ունի շաքարազատիչ արտադրություն է յուրահատուկ համի թխվածքների օգտագործում է կռած կահույքի, դահուկների, խոհանոցային սպասքի, թմբուկների, կիթառի, փողային նվագարանների, բոլորիսպի կեդերի և այլն արտադրելու համար [131]:

Թեննեսսիի մեթոդով վիսկիի հնեցման համար կիրառվող կաղնե տակառները պատրաստման ընթացքում ենթարկվում են կրակով մինչև 500-600°C ջերմամշակման այնքան ժամանակ, որ տակառատախտակների ներքին մակերեսը գրեթե ածխանում է: Նման եղանակով մշակված տակառներում հնեցումն իրականացվում է ոչ պակաս 2 տարի: Արդյունքում ստացվող ըմպելիքը ունենում է քաղցր օծանելիքային և վանիլային յուրահատուկ հաճելի բուրբոններ: [63]

Մեր կողմից փորձարկվել է Թեննեսսիի մեթոդի կիրառմամբ ստանալ ծիրանի թուփն ալկոհոլային ըմպելիք: Փորձարկումները կատարվել են 300լ. 63,2% թնդուլթյամբ ծիրանի սպիրտով, որի նախնական ցուցանիշները բերված են աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14.

**Ծիրանի սպիրտի քիմիական անալիզների տվյալներ**

Անալիզի տեսակ	Անալիզի ցուցանիշ
Թնդուլթյուն %	63,2
Ցնդող թթուներ գր/դմ <sup>3</sup>	55,0
Ալդեհիդներ մգ/լ	15,5
Բարձր սպիրտներ մգ/լ	210,0
Միջին էթերներ մգ/դմ <sup>3</sup>	101,0
ՏոլրՏոլրոլ մգ/լ	1,8
Մեթանոլ գր/լ	1,6
pH	3,5

Ծիրանի սպիրտի ֆիլտրացիայի համար սպիտակ թխկիի (*Acer Pseudoplatanus*) բնափայտից պատրաստվել է փայտածուխ:

Փայտածուխը ստացվում է առանց կամ սահմանափակ օդի մուտքով բնափայտի պիրոլիզով: Փայտածուխի ստացման հետ մեկտեղ, փայտից անջատվում է մեթանոլ, քացախաթթու, ացետոն, խեժեր և այլն: Փայտածուխն՝ ի շնորհիվ ածխացման պրոցեսում անջատվող գազային նյութերի, ունենում է կապիլյարային կառուցվածք, փոքր խտություն և ձեռք բերում է լուծույթներին ցածր նյութերաբսորբելու ունակություն [129,138]:

Թխկու բնափայտից փայտածուխ ստանալու համար պատրաստվել է 0,08մ<sup>3</sup> ծավալով գլանաձև տարողություն, որում լցվել է 0,05 մ<sup>3</sup> ծավալով կեղևազերծ բնափայտ: Տարողությունը ծածկվել է գումարային 25 մմ անցքերի տրամագիծ ունեցող 10 անցքերով կափարիչով և ամրացվել պնդողակներով: Կափարիչի անցքերից մեկում տեղադրվել է ջերմաչափ: Նախապատրաստված տարողությունը տեղադրվել է հատուկ ձևավորված օջաժի վրայ նստես, որ օջախում այրվող փայտի բոցերը ողողեն ներքևից՝ հաշվարկված գլանի մակերևույթի 3/4-ը:

Օջախում այրումը կատարվել է այն հաշվով, որ տարողության ներսի ջերմաստիճանը ընկած է ինի 350-430°C-ի սահմաններում:

Նման ռեժիմով ածխացման պրոցեսը շարունակվել է 3 ժամ, որից հետո օջախի կրակը մարվել է և տարողությունից ածուխը դուրս է բերվել լրիվ հովանալուց հետո: Ստացված փայտածուխը ենթարկվել է մասնակի մանրացման և կրկնակի մաղման: Ֆիլտրման համար ընտրվել է 3-15մմ չափերով փայտածուխ: Իսկ մոխիրը հեռացնելու

համար այն լվացվել և չորացվել է: Աբսորբցող ունակության մեծացման համար փայտածուխը փակ տարողությունում, մեկ ժամ տևողությամբ ենթարկվել է տաքացման 150-180°C պայմաններում:

Ակտիվացված փայտածուխը լցվել է 40մմ տրամագծով և 1700մմ բարձրությամբ չժանգոտվող պողպատյա խողովակի մեջ, և ծիրանի սպիրտը \$իլտրվել՝ ածխի շերտով անցկացնելով: \$իլտրատի կենսաաքիմիական ցուցանիշները բերված են N15 աղյուսակում:

Ակտիվացված ածուխի շերտով \$իլտրված ծիրանի սպիրտի կենսաաքիմիական ցուցանիշներ.

Աղյուսակ 15.

**Ծիրանի սպիրտի քիմիական անալիզների տվյալներ**

Անալիզի տեսակ	Անալիզի ցուցանիշ
Թնդողություն %	62,1
Ցնդող թթուներ գր/դմ <sup>3</sup>	62,0
Ալդեհիդներ մգ/լ	7,5
Բարձր սպիրտներ մգ/լ	201,0
Միջին եթերներ մգ/դմ <sup>3</sup>	114,0
\$ուր \$ուրոլ մգ/լ	1,3
Մեթանոլ գր/լ	1,5
pH	4,2

Ըստ 14 և 15 աղյուսակներում բերված տվյալների զգալի չափով իջել են սպիրտի թնդողությունը, ալդեհիդների, բարձր սպիրտների, \$ուր \$ուրոլի զանգվածային քանակները, սակայն ցնդող թթուներ և միջին եթերների զանգվածային քանակները՝ ավելացել: Մինչ \$իլտրումն ու դրանից հետո ստացված ծիրանի սպիրտի նմուշները ենթարկվել են աշխատանքային համտեսի: Արդյունքում արձանագրվել է, որ \$իլտրած նմուշում նկատելի չափով թուլացել է ծիրանի

բնորոշ համը, սակայն այն ձեռք է բերել բուրբոններին հատուկ քաղցր համ ու բուրմունք:

### **Եզրակացումներ**

Կատարված գիտափորձարարական աշխատանքով ստացված արդյունքներով հնարավոր է եզրակացնել՝

- Ծիրանի սպիրտի \$իլտրոնմը թխկիի փայտածուխով՝ հետագա հետցմամբ տակառների մեջ, ստացվող սպիրտին հաղորդում է ամերիկյան բուրբոններին հատուկ ցանկալի որակներ:
- Նման մշակմամբ հնարավոր է ստանալ ծիրանի թուղալկոհողային խմիչքների նոր տեսակներ
- Ստացված սպիրտի նոր որակների ձեռքբերումը պայմանավորված է թխկիի բնափայտի յուրահատուկ շաքարների պարունակությամբ և կաղնե տակառների բարձր ջերմաստիճաններով մշակումով:

### **3.9. Ծիրանի տրոբված գանգվածի խմորում ծիրանի սպիրտային թորվածքի և շաքարի ավելացումով**

Գիտագործական հիմնական հոլմքի՝ խաղողի համեմատ, կորիզավոր մրգերում շաքարների գրեթե կրկնակի չափով պակաս են պարունակվում: Կորիզավոր մրգերի հիմնական մասի հասունացման և գանգվածային բերքահավաքի ժամանակահատվածները համընկնում են տարվա շոգ ամիսների հետ, ինչով պայմանավորված՝ մրգերի խմորման պրոցեսը դառնում է դժվար կառավարելի: [122]

Սկսած 2009 թ.-ից Արարատի «Աբրիկոն» ընկերությունում, որը մասնագիտացած է մրգօղիների արտադրության տեխնոլոգիաներում,

կիրառվող տեխնոլոգիաների կատարելագործման  
նախնայությունը փորձարկումներ են իրականացվում:  
Փորձարկումների արդյունքների համաձայն առանց  
միջամտության ծիրանի տրորված զանգվածի  
խմորումը բնութագրվում է հետևյալ ընթացքով.  
խմորման առաջին երկու օրում խմորվում է  
շաքարների ընդհանուր քանակի 80%-ը, որից հետո  
պրոցեսը նախատեսվում է քացախաթթվային խմորմամբ:  
Առավել հաճախ խմորման երրորդ օրվա ավարտին  
ստացված պատկերը հոլսադրող համարել հնարավոր  
չէ: Մոտավորապես զանգվածի 1%-ը մնացորդային  
շաքար, 4,8%-ը էթիլ սպիրտ, քացախաթթվի  
պարունակությունը՝ 3գ/լ խմորման հետագա  
շարունակման պարագայում էթիլ սպիրտի  
քանակությունը այլևս չի ավելանում, իսկ  
քացախաթթվինը գնալով աճում է: Այսպիսով,  
ծիրանում շաքարների փոքր պարունակության  
և մասամբ շոգեղանակի պատճառով հնարավոր  
չի լինում ծիրանի տրորված զանգվածից թորման համար  
պահանջվող որակի խմորված զանգվածի ստացումը:  
Երկրորդ պատճառը արտադրական պայմաններում  
հնարավոր է կարգավորել, որը, սակայն բավարար  
չէ: Բացի այդ, նման մոտեցման պարագայում խմորման  
պահանջվող տեխնոլոգիաները շատ է երկարում  
բերելով պատրաստի արտադրանքի ինքնարժեքի  
մեծացման: Արտադրական պայմաններում շաքարի  
ավելացման մեթոդով էլանյութի խմորումը հայտնի  
է դեռևս 19-րդ դարի սկզբից, եղանակի հեղինակն է  
Ֆրանսիացի քիմիկոս Ժան Անտուան Շապտալը:  
Ֆրանսիայում անձրևոտ, խոնավ և ոչ բարենպաստ  
տարիներին արտադրվող գինեկոնյութի որակի  
բարելավման նպատակով Շապտալը առաջարկել և  
կիրառել է խաղողի քաղցուի նշաքարի ավելացում:



Շապտալը, շաքարի ավելացումից զատ (որը գինեկոթում ավելացնում է սպիրտի պարունակությունը) թթվայնության իջեցման նպատակով քաղցուի ավելացրել է կավիճ կամ մարմարի փոշի: Նման ձևով գինիներին և թորման համար գինեկոթերի արտադրական տեխնոլոգիական պրոցեսներում քաղցուի մշակման եղանակը կոչվում է Շապտալի զացիա: Ելանյութի և պատրաստի արտադրանքի բնափոխման պատճառով ներկայումս շապտալի զացիան լայնորեն կիրառվում է շատ երկրներում, սակայն սահմանափակումներով [84,126]:

Ելնելով շարադրվածից, մեր կողմից փորձարկվել է ծիրանի տրորված խյուսից հնարավորինս բարձր թնդությունամբ խմորված զանգված ստանալ՝ միաժամանակ իջեցնելով քացախաթթվային խմորման ընթացքի ռիսկը:

Խնդրի լուծման համար փորձնական աշխատանքները տարվել են ծիրանի տրորված զանգվածին շաքար և ծիրանի խմորված խյուսի թորվածք ավելացնելով: Փորձերի իրականացման համար վերցվել է 75 կգ ծիրանի տրորված զանգված, բաժանվել 15 կիլոգրամանոց 5 բաժինների: Ծիրանի տրորված զանգվածում ընդհանուր չոր նյութերի պարունակությունը կազմել է 13,8%, լուծելի չոր նյութերը՝ 13,1%, իսկ շաքարները՝ 11,2%:

Առանձնացված խմբաքանակները մշակվել են հետևյալ տարբերակներով:

Ավելացվող շաքարում լուծելի չոր նյութերի պարունակությունը կազմել է 99,1%, որը ներմուծվել է 65% ջրային լուծույթի ձևով:

Նախնական մշակումից հետո խմորման ենթակա ծիրանի տրորված զանգվածի, լուծելի չոր

նյութերի, շաքարների և սպիրտի տոկոսային պարունակությունների ցուցանիշները բերված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16

**Խմորման համար նախապատրաստված ծիրանի տրորված գանգվածի ցուցանիշներ**

N	Մշակման տարբերակ	Ստացված գանգված		Լուծելի նյութեր %		Սպիրտի պարունակ. ալցոլիտր	Շաքարի պարունակ. կգ.	Խառնուրդի խտուրդը /սմ <sup>3</sup>
		կգ	լիտր	ընդամենը	ավելացված			
1	Տարբերակ 1	15,0	14,27	13,10	-	-	1,68	1,050
2	Տարբերակ 2	16,52	15,42	17,80	4,70	-	2,68	1,071
3	Տարբերակ 3	17,29	16,00	19,97	6,87	-	3,18	1,080
4	Տարբերակ 4	15,65	15,03	-	-	0,50	1,68	1,041
5	Տարբերակ 5	16,00	15,43	-	-	0,75	1,68	1,037

**Լրացում.**

- Խառնուրդների խտուրդը հաշվարկվել են՝ օգտվելով էթիլ սպիրտի ջրային լուծույթների աղյուսակից և յուղ չպարունակող մթերքների համար ստացված

$$p = \frac{267}{267 - c} \text{ գ/սմ}^3 \text{ փորձնական բանաձևից,}$$

- Խառնուրդների չոր նյութերի պարունակությունները հաշվարկվել են միջին տոկոսային թվի բանաձևով


$$C = \frac{g_1 \cdot C_1 + g_2 \cdot C_2 + \dots + g_n \cdot C_n}{g_1 + g_2 + \dots + g_n}$$

որտեղ C - չոր նյութերի պարունակությունն է ելանյութերում և խառնուրդում %,

ճեղանյութերի զանգվածներ [5]:

Նախապատրաստված բոլոր նմուշներին ավելացվել է LALVIN ապրանքանիշի K1-V1116 տեսակի խմորասուսկ, խմորումը տարվել է 24-26°C-ի պայմաններում:

Խմորման ընթացքի և թնդուլթյան ցուցանիշները բերված են նկար 8-ում:



Նկ.9. Խմորման ընթացքի և թնդուլթյան ցուցանիշներ:

Բերված իցակն հայտ է, որ սպիրտի ավելացումով նմուշներին խմորման ընթացքը սկսվել է բավականին դժվար: Ամենահաղադ ընթացքը եղել է 5րդ նմուշի խմորման ընթացքում, որում բոլոր խմորումայնպես էլ չի դիտվել և այն ընթացել է ավելի

հանգիստ և «սահուն»: Խմորման այս տարբերակի առավել ությունը նաև նրանում է, որ ջերմաստիճանի անջատումը չափավոր էր, որի իջեցման համար էներգետիկ ծախսեր չէր պահանջվում: Ամենաանկայուն և խմորվածքը առաջին՝ հսկիչ տարբերակն է, որը խմորման չորրորդ օրվա վերջում ունեցել է 5,6% թնդություն, իսկ 12 ժամ հետո թնդությունն կազմել է 5,1 %: Դիտարկված փորձանմուշների խմորման վերջին անալիզի ժամանակ որոշվել է նաև մնացորդային շաքարների քանակը, որը բոլոր նմուշների մոտ տատանվել է 0,2%-0,3% սահմաններում:

Խմորման պրոցեսն ավարտելուն պես բոլոր նմուշները թորվել են:

Խմորվածքների թորումից հետո ստացված սպիրտը ենթարկվել է անալիզների՝ որոշվել են մեթանոլի և \$ոլր\$ոլրոլի քանակները, ինչպես նաև թնդությունները: Կատարվել է աշխատանքային համեմատական համտես: Արդյունքները բերված են աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17

**Փորձանմուշներում մեթիլ սպիրտի, \$ոլր\$ոլրոլի պարունակությունների ցուցանիշներ**

Մշակման տարբերակներ	Խմորվածքի թնդություն %	Թորվածքի թնդություն %	Մեթիլ սպիրտի պարունակությունը գ/լ			\$ոլր\$ոլրոլի պարունակությունը գ/լ	Պարունակությունը ստուգելի նկատմամբ %	Օրգանոլետիկ գնահատական 10 բալանոց սանդղակով
